

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԸ

Մ. ԱԲԵՂԵԱՆԻ

Խորենացու հին պատմութեան ժողովրդական ազրիւրը յայտնի է: Դժուար է ընդունել, որ նա մինչև Արտաւազդ ժողովրդական երգերից, զբոյցներից ու վիապասանքից օգտուէր, իսկ այսուհետեւ բոլորովին անուշադիր թողնէր ժողովրդական աղբիւրը: Նա Տրդատից առաջ «զինի մահուանն Խորովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեան» պատմութեան համար աղբիւր դնում է Փերմեղիանոս եպիսկոպոսի գիրքը: «Պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ», որի համար աւելացնում է թէ հեղինակը շարայարել է վրան և թագաւորների գործերը (Բ. հե): Այդպիսի գիրք եղել է թէ չէ, այդ չէ մեզ հետաքրքրում: բայց ինչ որ Խորենացին այդ գրքից օգտուած է դնում, որ հայոց պատմութեան է վերաբերում, մասամբ Ազաթանգեղոսի մէջ կայ կամ ամբողջապէս կամ համուօտ, բայց այնպէս որ ինքը Խորենացին կարող էր ընդարձակել՝ հիմնուելով Ազաթանգեղոսի վրայ. մասամբ ևս այնպիսի պատմութիւններ են, որ Ազաթանգեղոսի մէջ չկան և չին կարող լինել մի եկեղեցւոյ Հալածանքի պատմութեան մէջ, թէ կուզ վրան աւելացրած լինէին թագաւորների գործեր ևս Այսպէս են, օրինակ, Արտաշրի արարքները Հայաստանում, Օտայի Խորովիդխատին պահելը, Աշոցան ազգից Տաճատի մասին, Տրդատի մի քանի քաջագործութիւնները, Մամիկոնեանց զրոյցը և այլն,—ըոլորը այնպիսի պատմութիւններ, որ վիապական բնաւորութիւն ունին: Կարծում ենք, այդ ամենը ժողովրդական ծագում ունին, թէպէտ և պատմագիրը լսում է այդ մասին: Թէ զրանք Խորենացու ստեղծածը չեն, վկայ է այն, որ Մամիկոնեանց ծագման մասին զրոյցը կայ և Սերէսոսի պատմութեան մէջ:

Սերէսոփի երեք գալրութիւնն ևս նոյն հեղինակի գործ պէտք է համարել. հակառակ պատճառաբանութիւնները մեզ համողիչ չեն թուում: Բ. դարրութեան մէջ, Մամիկոնեանց ծագման զրոյցը սկիզբն աղաւաղուած է, միջից գուրս ընկած լինելով հայ Արշա-

կունիների ցանկը մինչև Մեծն Խոսրով<sup>1)</sup>: Պատմութիւնն այստեղ դրուտծ է ձինաց գեսպանների բերանին, բայց շարունակութիւնն այնպէս է տարած, որ չի իմացւում թէ որտեղ է վերջանում գեսպանի, իսկապէս ճնաց գուսանների խօսքը, և ուր պատմագիրն իրենից է խօսում: Կարելի չէ ընդունել, թէ ձինաց գուսանները իմանային Հայաստան փախած երկու եղբայրներից Հայոց սպարապետներ են ծագում: «Ասեն գուսանքն և ի մերում աշխարհիս» խօսքից երևում է, որ հայոց մէջ ևս գուսաններն առել են Մամիկոնեանց ծագման պատմութիւնը: Եւ Սերէոսն իսկապէս այդ պատմութիւնն է արել, միայն մասամբ ճնաց գեսպանների բերանին դրած:

Բացի սրանից՝ Սերէոսի պատմութեան Գ. Դպրութեան մէջ ևս կան ժողովրդական պատմուածքներ, որոնց մասին, ինչպէս և Յովհան Մամիկոնեանի և միւսների մասին ներքեռում կը զրենք:

Պարսից պատերազմը:—Այսպէս կոչում ենք մեր հին վեպը, որովհետև դրա մէջ պատմուած է եղել այն մեծ պատերազմը, որ գարեր շարունակ առուել են հայերը պարսից դէմ: Դա եղել է մի ընդհանուր ազգային վէպ, որի մէջ իրենց տեղն են ունեցել հայ թագաւորները և երկրի գանազան իշխաններ, բայց գլխաւորապէս ծարօնի և Սամուատէր Մամիկոնեանք, որոնք սպարապետ և արքարդիների դայեակ են եղել: Նրանց մատը խառն է զրեթէ ամեն բանի մէջ, և վէպի պատմութիւնները մեծ մասամբ նըրանց պարծանքի համար են յայտնուած, այնպէս որ վէպը դառնում է և Մամիկոնեանց վէպ:

«Պարսից պատերազմը», ինչպէս մեր «Սամուատէրը», կապուած է մի նոր ցեղի ծագման հետ մի կողմից Հայոց Մամիկոնեան սպարապետութեան, միւս կողմից Պարսից Սասահեան հարստութեան: Հայ Արշակունեանց և Սասահեանց մէջ սկսում է մի մեծ կռիւ, որ տեսում է մի քանի սերունդներ՝ Խոսրով, Տըրդատ, Խոսրով, Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ և Արշակ, —և վերջանում է Հայոց թագաւորութեան երկսի բաժանուելով, իսկապէս ընկնելով: Ժողովուրդն ուրեմն իւր աէրութեան անկումն ըմբռնել է իրեք հետևանք դարաւոր կռուի Պարսից դէմ: Կռուի ոգին եղել են սպարապետները, որոնց մի քանի սերունդներ երևան են գալիս սկսած Մամիկոնեանց ծագումից, —Մամիկոնակ, Արտաւազդ, Վաչէ, (Արտաւազդ և) Վասակ, Մուշեղ և Մա-

<sup>1)</sup> Սր. Մալխասեան, Սերէոսի պատմութիւն և Մ. Խորենացի. եր. 102.

Դուէլ։ Այս կողմից վէպը վերջանում է Մամիկոնեանց յաղթանակով և փառով։

Տեսնենք այդ վէպի սերունդները կամ, մեր այժմեան վէպի բառով, «ճիւղերն» առանձին առանձին, որով և մօտաւորապէս կը վերականգնուի վէպի ընդհանուր բովանդակութիւնը։

1. Խոսրով։ Մամիկ-Կոնակի, Երկու եղբայրներ չինական նշանաւոր տոհմից, թագաւորի երկրորդի որդիք, Մամիկ և Կոնակ, գմտուելով, ապստամբում են Շենաց թագաւորից, որ իրենց համամայր եղբայրն է, բայց յաղթուելով՝ ապաստանում են Պարթևաց Վաղարշի որդի Արտաւան թագաւորի մօտ, որ Հայոց Վաղարշի որդի Խոսրով թագաւորի ազգականն (Եղբայրն) է։ Արտաւանը, որպէս զի իւր և ձենաց թագաւորի մէջ խաղաղութիւնը չվրդովուի և միանդամայն իւր երդումը պահած լինի, նրանց իրենց աղխոլ ուղարկում է Խոսրովի մօտ Հայաստան<sup>1)</sup>։

1) Սերէսս եր. 12 հտ. Խորենացի Բ. Յա. Երկու պատմագիրները շատ նման, երբեմն և նոյն բառերով են պատմում. բայց կան և խոչոր տարբերութիւններ, Յիշենք միայն, որ ըստ Խորենացու Մամիկոնեանց նախնին մի հոգի է՝ Մամգոն, ձեռագիրների մէջ նաև Մամգոն, Մամկոն, իսկ Սերէսսի մէջ երկու եղբայր՝ Մամիկ և Կոնակ, որոնք պարզ կերպով նուազական են Մամ և Կոն անուններին Իսկ զոյտ անունների իբրև մի անձի անուն ընդունուելը, ինչպէս Մամ-Կոն Խորենացու մէջ, յատուկ է ժողովրդական վէպին, որ օրինակ գտնում ենք և մեր նոր վէպի մէջ։ Պէտք է կարծել, որ Խորենացու պատմուածքի մէջ հենց Մամ-Կոն մի անուն է համարուած եղել Յիշենք երկու պատմագրի և այս էական յարաբերութիւնը, Խորենացու մէջ Մամկոն ապաստանում է ոչ թէ Արտաւանի մօտ, այլ նրա յաջորդ Արտաշրի մօտ, որ իսկոյն մեռնում է, և յաջորդք՝ Շապուհ ուղարկում է նրան Հայաստան ճիշտ այն ժամանակ, եղբ Տրդատ գալիս է թագաւորելու Հայոց, Տրդատն ընդունում է Մամկոնին, և երբ ինքը հիւսիսական ազգերի դէմ կուռւմ է, Մամկոն սպանում է Ողական ամրոցի տէր Սղուկ Սլիկունուն և Տրդատի հրովարտակով տէր և նախարար դառնում Սլիկունեաց փոխանակ՝ իշխելով նրանց կալուածներին (Բ. Զդ.)։ Այս իսկ վիպական միջազգը դժբախտաբար միայն Խորենացու մէջ ունենք։ Մեզ թըւում է թէ ժողովրդական պատմուածքի մէջ ասուել է և Խոսրովի օրով, որ նոյնպէս հիւսիսական ազգերի դէմ կոիւ է ունեցել։ Այս կարծիքի հիմն այն է, որ Սերէսսը Սպարապետութեան ազգի ծագումը դնում է Մամիկ-Կոնակից, և Խոսրովի օրով սպարապետում է Կոնսակ, իսկապէս Կոնակ, Կոնանակէ երկու Եղբայրը մի նշանաւոր զործ պիտի կատարէին, որ Կոնակն արժանանար սպարապետութեան։ Մենք վերկում մեր կարծած ձևով դրինք։

Խոսրովը (Տրդատ) պատերազմում է հիւսիսական աղքարի դէմ: Այդ ժամանակ նրանից ապստամբում են Տարօնի Ողական ամրոցի տէր Սլկունեանց Սղուկ նահապետը և Սիմ լեռան բնակիչները: Թագաւորը խոստանում է նրան տալ Սլկունեաց իշխանութիւնը, ով իւր մօտ կը բերէ Սլկունեաց նահապետին: Մամենն խարէութեամբ սպանում են Սղուկին, և Տրդատ նրանց է տալիս Սլկունեաց կալուածները և նախարար կարգում նրանց (Խոր. Բ. Յու., տես մեր նախորդ ծանօթութիւնը):

Այսպէս երկու եղբայրները հաստատում են Տարօնում և Սիմ լեռան վրայ. նրանց ամրոցն է Ողական: Նրանց սերունդը, Մամիկոնեանք, ինչպէս զրում է Սերէոս, ողանում են մեծ ազգ, այն է հայոց սպարապետները: Առաջին սպարապետն է Կոնակ, սպարապետ Մեծին Խորովում, 1) որի համար ասում են թէ 100 տարի է ապրել և թէ մեռնելիս ունեցել է ոգներս և զաչս և զսելիս և զզաւրութիւն մանկութեաննա:—Իսկ մի ժողովրդական զրոյց, որ յիշեցնում է Սիմ լեռան Ծովասար գագաթի վրայ հովտութիւն անող Տարգարի զրոյցը (Դրոց և Բրոց եր. 38):

Վէպը հայոց սպարապետութեան ծագումը պատմելուց յետոյ՝ անցնում է սպարապետների վարած «Պարսից պատերազմի» ծագման պատճռին, այն է՝ Վաղարշի որդի Արտաւանը զիշերը անկողնում աստղերին նայելով, ինչպէս մեր նոր վէպի մէջ Զէ-

1) Սերէոսի մէջ (եր. 13 հտ.) զրած է. «Մինչ արքայ Խոսրովի ի Միջագետս էս, Կարոս կայսր զումարէ ամրոխ զաւրաց բազմաց, և դիմէ ի վերայ արքային Խորովայ. անտի աճապարեալ ընդդէմ նորա ելանէ Կոռնակ սպարապետ Մեծին Խոսրովու հաւրն Տրդատայ... Մեռանի կարոս ի պատերազմին հանգերձ միով որդուով իւրով կարիանոսիւ: Խորենացին (Բ. հթ) Սերէոսից տարրեր է դնում. Կարոս և որդին կարինոս սպանում են Արտաշրի դէմ կառուի մէջ...» սպանաւ Կարոս ի Յոինովն: Նոյնպէս և Կահնաս, որ ի վերայ Կոռնակայ չոգաւ յանապատ, ընդորուում և Տրդատայ: Այս Կոռնակ զօրավարի զոյութիւնը կամածելի է համարում և թերեւս սխալ ընթերցուածից ծագութ (Տաշշեան, Ազաթ. եր. 123): Բայց մի անզամ որ ստեղծուել է Կոռնակ զօրավար պարսից, ինչպէս Խորենացու մէջ է, և մենք Սերէոսի մէջ գտնում ենք այդ Կոռնակին դարձրած հայոց Խոսրով թագաւորի զօրավար, պատճառն այն է միայն, որ Սերէոսին վէպից ծանօթ է եղել, որ սպարապետները ծագում են Մամիկոնակից և որ առաջին սպարապետն եղել է Կոռնակ: Ուստի և ինչ որ Խորենացին պարսիկ զօրավարի համար է պատճում, Սերէոսը հաւր զօրավարի համար է դնում, աւելացնելով և նրա ծերութեան մասին եղած զրոյցը, և անօսնը պահելով Կոռնակ փոխանակ Կոռնակի:

նով Յովանը, իմանում է, որ ով ապստամբի իւր տիրոջից՝ կը թաղաւորի, Արտադուխաը, Սասանեան Արտաշի սիրելին, որ իրրև նաժիշտ նոյն ննջարանում էր պառկում, լսելով թագաւորի այդ խօսքը՝ իմացնում է Արտաշրին, որ ապստամբում է Արտաւանից, կոռւելով յաղթում, սպանում է նրան, և տեղը թագաւորում ինքը՝ Սասանեան հարստութեան հիմնադիրը (Յունարէն Ազաթ. ակիզը):

Հայոց Խոսրովը իւր աղքականին, եղբօրը, օդնել է ուղում, բայց չի կարողանում. և ապա երբ Արտաւանը սպանում է, սկսում է իւր վրէժինգրութեան տասնամեայ կոիւները, որ պատմում է Ազաթանգեղոսը, անշուշտ իւր կոնակ զօրավարի ձեռովկ Պարսից թագաւորը նեղն է ընկնում և կոռի մէջ չկարողանալով բան անել հայերին, խորհրդի է կանչում իւր մեծամեծներին. Անակը գալիս է Հայաստան, դաւաճանութեամբ սպանում է Խոսրովին, բայց ինքն էլ իւր բոլոր ընտանիքով սպանում է:

Այստեղ վերջանում է, ինչպէս կարծում ենք, վէպի առաջին ճիւղը, որ մի հետաքրքիր վիտպական պատմուածք է իւր ամբողջութեամբ:

2. Տրդաս, Արտաւազդ. —Պարսից թագաւորն որ լսում է Խոսրովի մահը, «զուարթանայր», զուարթանայր, տօն մեծ ուրախութեան առներ զօրն զայն. և բազում ուխտ և ատրուշանացն առներ։ Նա զօրք է ժողովում, զայիս Հայաստան, տիրում, գերում։ Կոտորում է հայոց թագաւորական տունը։ Խոսրովի որդիներից Տրդատին, «մանկիկ մի փոքրիկ», Յունաստան է փախցնում Արտաւազդ Մամիկոնեան (Որդի Կոնակայ), իսկ Օտայ Ամատունին Խոսրովիդիստին պահում է Անի ամբոցում։ Արտաշրին Արտաւազդի ցեղը կոտորում է. Արտաւազդի քոյլերից մէկին միայն տղատում է Տաճատ Աշոցան ազգից, որ և պահում է նրա հետ (Ազաթանգեղոս. Գ. Խորենացի. Բ. ԶԶ. ՀԲ.):

Արտաւազդը<sup>1)</sup> դայեակ լինելով մեծացնում է մանուկ Տըր-

<sup>1)</sup> Ազաթանգեղոսի մէջ, ուր գլխաւոր ուշագրութիւնը գարձած բած է թագաւորի և Ս. Գրիգորի վրայ, Տրդատին Յունաստան փախցնողի համար անորոշ ուժու է զրած։ Խորենացին որոշ Արտաւազդ Մանղակունի է զնում, որ և յիտոյ սպարապետ է դառնում (Բ. ԶԲ. ԶԵ. Գ. Զ.): Ազաթանգեղոսի մէջ ևս (ՃիԳ) Տրդատի օրով յիշում է Արտաւազդ սպարապետ ամենայն զօրացն Հայոց, և օիշխանն «Սպարապետութեան զօրացն Հայոց աշխարհին», «սպարապետն մեծ» (ՃիԲ. ՃիԶ): Վերջին կոչումները պաշտօնի անունով են զրած, բայց ինչպէս նոյն տեղում «Իշխանն թագակապ՝ իշխանութեան սապետութեան», «թագաղիր սապետան» տեղով թագրատունիք են հասկացւում, նոյնպէս և սպարապե-

դատին, որը յաղթանդամ հսկայ դառնալով ծառայում է Լիկիաս նէսի մօտ ու շատ քաջագործութիւններ է անում (Ազաթ. Ժթ. Խորեն. Բ. Հթ.). Վերջը մենամարտելով Գոթաց թագաւորի հետ գալիս է թագաւորում Հայաստանում, կուռում պարսից դէմ. և «ինդրէր զբէնս վրիժուց իւրոց հայրեննացն». (Ազաթ. Դ. ԺԱ. Խորենացի Բ. Հթ. Զի.).

Վէպի շարունակութիւնն այնուհետև դժբախտաբար միայն Խորենացուց գիտենք, որովհետև Ազաթանգեղոսն այլ ևս ուշաւ դրութիւն չի գարձնում Տրդատի աշխարհական կեանքի վրայ և պատմում է զիխաւորապէս բրիստոնէութեան քարոզութիւնը Հայաստանում. Բայց և այնպէս կարող ենք ասել, որ վէպի մէջ պատմուած է եղել թէ Տրդատի բազմաթիւ քաջագործութիւններից յետոյ՝ խաղաղութիւն է եղել, որ և յիշում է Բիւզանդ (Դ. 17): Վիպական է և Տրդատի կռիւը հիւստական ազգերի դէմ. թերեւ և նրա ամուսնութիւնն ու սիրահարութիւնը Հորիսսիմէի վրայ՝ ըստ Ազաթանգեղոսի, և Տրդատի մահը իւր իշխանների ձեռով։

3. Խոսրով, Վաչէ:—Թագաւորում է Տրդատի որդի Խոսրով, սպարապետ է Արտաւազդի որդի Վաչէ, որ յաղթում է հիւսիսային ազգերին ծլու. Գլուխ լեռան վրայ և Օշական բերդի մօտ: Թագաւորը վարձատրում է իւր քաջերին: Խաղաղութիւնն երկար չի տեսում, որովհետև յանկարծ յարձակւում են սպարսիկները, Վաչէն զրադուած է Խոսրովակերտի անտառը տնկելով. Թագաւորը պարսից դէմ ուղարկում է Բզնունի Դատարային, որ դաւաճանում է անցնելով պարսից կողմը: Ազա գալիս է ծերունի Վաչէն,

տութեան, սպարապետ ասելով՝ Մամիկոննեանք: Բիւզանդի մէջ՝ յայտնի կերպով սպարապետութեան իշխանութիւնը ժառանգական է և Մամիկոննեանք են սպարապետ: Այստեղ (Գ. Դ.), Տրդատի որդի Խոսրովի օրով յիշում է «Վաչէ որդի Արտաւազդայ, նահապետ Մամիկոննեան տոհմին, յազդէ սպարապետութեան Հայոց»: «Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոննեան տոհմէն, զօրավար ամենայն Հայոց Մեծաց»: Այս Վաչէն Խոսրովի ժամանակ արդէն ծերունի է (Գ. Ը.): Ասցուշտ այս Վաչէի հայր Արտաւազդը նոյն է Ազաթանգեղոսի Արտաւազդ սպարապետի հետ, ինչպէս և Խորենացու Արտաւազդ սպարապետի հետ: Բայց ինչժե Խորենացու մէջ Արտաւազդը Մանդակունի և ոչ Մամիկոննեան, այդ անհականալի է. Թերևս մի պատմուածքի մէջ Մանդակունի է յիշուած եղել, եթէ չուզենք ասել, ինչպէս ուրիշները, թէ Խորենացին Մամիկոննեանը Մանդակունի է շինել Մամիկոննեանց նսեմացնելու համար: Զայտոք է մոռանալ և այն, որ ըստ Խորենացու Արտաւազդ Մանդակունին գործում է այն ժամանակ, երբ դեռ Մամիկոննեանց նախնին Հայաստան չէր եկել:

յաղթում պարսիկներին, պատժում Բգնունեաց իշխանին: Բայց պարսիկների օգնութեամբ ապստամբում է Աղձնեաց Բակուր բդեշխը: հայ զօրքերը պատժում են նրան: Նորից յարձակւում են պարսիկները և պատերազմի մէջ ընկնում է ծերունի Վաչէն: զօրավարութեան գործը յանձնում է Մամիկոնեան տան փեսաներին՝ Արշաւիր Կամսարականին և Անդովկ Սիւնուն, որոնք և պիտի կրթեն ապագայ սպարապետ մանուկ Արտաւազդին: Իւր մահով մեռնում է Խորով և թագաւորում որդին Տիրան (Բիւզանդ Դ. 7. 8. 9. 11.):

Այս ճիւղի մէջ հայերն արդէն իրենց երկրի պաշտպանութեան համար են մտածում: Ներս է մտնում հայի իշխանների ապստամբութիւն ու զաւաճանութիւն: բայց Մամիկոնեանք քաջ կուռմ են և թագաւորի հաւատարիմ ծառաներ են:

4. Տիրան եւ Արշակ, (Արտաւազդ եւ Վասակ).—Այս ճիւղը մի սիրուն պատմուած է Մամիկոնեանց և յատկապէս Վասակին բարձրացնելու համար: Ամբողջը կազմուած է մի շարք նոյն շըրջանին պատկանող, իրենց մէջ փոքրիկ ամբողջութիւններ կազմող վէպերից, ինչպէս են հայր Մարգարետի, Տիրանի կուրացման, Գնէլի սպանման և այլն և այլն, մասին պատմուածները, որոնք միանում և մի մեծ ամբողջութիւն են առաջ բերում: Մենք միայն համառօտ բովանդակութիւնը կանարկենք:

Հայր Մարգարետը, յայտնի չէ թէ ինչո՞ւ կոտորել էր տալիս շատ նախարարների, մանաւանդ Ռշտուննեաց Արծրունեաց տոհմիրը, Մեհենդակ Ռշտունու Տաճատ որդուն և Վաչէ Արծրունու Շաւասպ որդուն, երկուսն ևս ստնդեայ երեխայք, բերում են թագաւորի առաջ, որ հրամայում է նրանց սպանել: Բայց Տիրանի որդի Արշակի դայեակները, Արտաւազդ և Վասակ, —վերջինս չի իմացնում ում որդին է, —որք էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց, վրայ հասնելով ուժով պատում են այդ երեխաներին, և թողնելով իրենց սան Արշակին, առնում գնում են իրենց աշխարհը՝ Տայոց ամուրները, ուր և մեծացնելով նրանց պատկում են իրենց աղջիկների հետ: «Եւ նստան անդ ամս բազում, և թողին զայլ տունն իւրեանց», այսինքն Տարօն, «և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս» (Բիւզ. Գ. 18):

Այսպէս մի բարի զործի համար երկպառակութիւն է ընկնում թագաւորի և իւր զօրավարների մէջ: Տիրանն իւր պատիժը ստանում է: Շապուհ Վարազը մի ձիու պատճառով կուրացնում է Հայոց թագաւորին, որովհետև ոզօրավարքն չէին անդ, այլ սարտուցեալ էին: Բայց Մամիկոնեանց տեղ գործում են նրանց

փեսաները, Անդոկ Սիւնին և Արշաւիր Կամսարական Յունաց կայսրին օգնութեան են բերում. պարսիկները յաղթւում են. Վարազ Շապուհը պատժում է, Տիրանն ազատում և թագաւորում է Արշակը, որի առաջին գործը լինում է հաշտուել Մամիկոնեանց հետ Վարդանը Մամիկոնեանց նահապետ է կարգում. Նրա եղբայր Վասակը՝ սպարապետ, իսկ կրտսեր եղբայր Վահանը՝ նոյնապէս ոի պէտս զօրաց։ Կարգաւորում են և ուրիշ նախարարներ և կաթողիկոս է ընտրում Ներսէս։ Իւր պատիմը ստանում է և Հայք Մարդպանալ, որին սպանում է Շաւասպ Արծրունի (Բիւղ. գ. 20. 21. Դ. 1—3. 14.)։

Այսուհետև գալիս է Յունաց կայսեր մօտ դեսպաններ ուղարկելը և Յունաց հետ կոփւը, Արշակաւանի պատմութիւնը, Պաէտի և Կամսարականների սպանումը, որոնք նոյն շրջանին պատկանող անկախ պատմուածքներ և կարող են եղած լինել (Դ. 5. 11—13. 15. 19.)։

Անպայման բուն վէպի մասերն են կազմում Արշակի և Շապուհի յարաբերութիւնները, իրենց բոլոր մանրամասնութիւններով, և վերջապէս երեսուն չորս տարուայ պատերազմը, որի հետեւանքը լինում է Արշակի և Վասակի եղբարական վախճանը և Հայոց երկրի աւերումը. (Դ. 16—18. 20—43. 45—55. 58. 59. Ե. 7.)։

5. Պապ Խ. Վարապղաս, Մուշելի։—Հայոց թագաւորութեան ժառանգը, Պապ, որ Յունաց մօտ է, Վասակի որդի, Մուշելի ջանքով գալիս է իւր հօր երկրին թագաւորելու Յունաց օգնութեամբ երկու յոյն զօրավար նրա հետ են՝ 600 բիւր, որ է վեց միլիոն զօրքով. Մուշելի սպարապետն ևս ժողովում է Հայոց զօրքը և ինքը մենակ սպանում պարսից երկու զօրավարներին, Զիկ և Կարէն, իրենց զօրքերով և մինչև ի բուն ի սահմանման ի Գանձակ Ատրպատականի զերկիրն յիւր վտարեալ ունէր։ Շապուհ թագաւորն անձամբ գալիս է Հայոց վրայ և բանակ դնում ի Թաւրէէզն։ Մուշելին ընկնում է Նրա բանակի վրայ և կոտորում։ Շապուհ միաձի փախչում է իւր բանակն ու գանձերը և կանանց թողնելով Մուշելի ձեռին, որ մեծ ազնւութեամբ է վարւում զերեալ կանանց հետ։ Մուշելին ամբաստանում են Հայոց թագաւորի մօտ թէ արձակեց թշնամի թագաւորի կանանց։ Պապի սրտի մէջ կասկած է ընկնում դէպի Մուշելը։

Կրկին անգամ կռուի է գալիս Շապուհ արքան, Պապը չի ուղում, որ Մուշելը կոիւ մանէ, ողի քարեկամ Մուշելն թագաւորին պարսից։ Այժմ էլ ոի պարսիկս խօսի, որովհետեւ կռուի նախընթաց զիշերը Մեհրուժանից, պարսից բանակից պատղամա-

առքներ էին եկել Մուշեղին։ Բայց միջնորդում է ս. Ներսէսը, և Մուշեղը երդուելով՝ գնում է կոխւ, յաղթում պարսիկներին, միայն Ազուանից Ռւունայր թագաւորին, թէպէտ և կարող էր սպանել չի սպանում, այլ արձակում է։ Դարձեալ ամբաստանում են Մուշեղին թէ թշնամի թագաւորին արձակում է և թէ հայոց թագաւորին սպանել է ուղում։ Մուշեղն արդարանում է։

Նորից յարձակում է Շապուհը. բայց Մուշեղն և յոյները դարձեալ յաղթում են և պատերազմը դադարում է (Ե. 1—2. 4. 5):

Այնուհետեւ գալիս է ապստամբ իշխանների պատիժը, որոնք Արշակի ժամանակ պարսից կողմէն էին անցել։ Ամենից առաջ պատժում է, նոյն իսկ կափաների ընթացքում, հայր Մարդակետը, որ Փառանձնմ թագունուն անպատճել էր. տեղը նշանակում է Թղակ անունով մէկը, որ հայոց թագաւորին դաւաճանել է ուղում, բայց բանում, նոյնպէս պատժում է։ (Ե. 3. 6.) Ապա կար գով պատժում են և միւս ապստամբները, որոնց թւում և Աղձնեաց բգեշխը, որ իշխանների մէջ ամենից առաջ ապստամբոցն է եղել։ Եւ այսպէս Մուշեղը փառաւորուած վարում է իւր սպարապետութիւնը (Ե. 8—20):

Սակայն երկար չէ քաշում Մուշեղի փառքը. Պապ թագաւորը գաւաճանութեամբ սպանում է յոյներից. իշխանները ոչինչ չեն անում. թագաւորում է վարազգատ, որ ոմանուկը բանսերթուկ» է։ Բատ Սահառունին, Վարդագատի դայեակը, ամբաստանում է Մուշեղին նրա չգործած հին մնդքով, և գաւաճանութեամբ ընթթիքի ժամանակ սպանել տալիս Մուշեղին և ինքն առնում սպարապետութիւնը (Ե. 32—36). Այսպէս չար հատուցումն է լինում Մուշեղին «ի վերայ բազում վաստակոց»։

6. Մանուկը, Արշակ։ Մանուկըն իւր եղբօր հետ ապատում է պարսից գերութիւնից. Բատից խլում է սպարապետութիւնը. կոռուվ հալածում վարազգատին, սպանում է Բատին՝ իւր «եղբօր» վրէմն առնելով։ Սկզբում բարեկամանում է Պարսից հետ, բայց յետոյ Մեհրուժանի քութեամբ կոտորում է պարսիկ Սուրբնի դօքերին, որով և կոխւ է սկսում հայոց և Պարսից մէջ։ Երեք անգամ յարձակում են պարսիկները, բայց միշտ յաղթում են և սպանուում է վերջապէս դաւաճան Մեհրուժանը։ Եւ վերջ է դրւում պարսից պատերազմին։ Մանուկը՝ թագաւորից նելով Պապի որդի Արշակին, եօթ տարի փառքով իշխում է և խաղաղութեամբ մեռնում։ Նրա մահից յետոյ սակայն հայոց թագաւորութիւնը հաստատ չի մնում և ընկնում է (Ե. 37—43):

Ա. Կապի միտրիւնը։ Արդեօք այս բոլորը, որ մենք համառօտ բերինք, կարմաղ է մի վէպ համարուել։ Կարծում ենք։ Սյս ամենը

կազմում է մի մեծ ամբողջութիւն, թէպէտ և ոչ գեղարուեստական: Մի ընդհանուր գործողութեան կապ, մի բարոյական գրութիւն տեսնել այս ամբողջի մէջ՝ իրեւ միութեան կենտրոն, իհարկէ կարելի չէ, Բայց և այնպէս՝ դա մի վէպ է և ունի իւրմիութեան կենտրոնը այն ձեռվ, ինչ ձեռվ որ Ֆիրդուսու Շահնամէն ունի: Այսաեղ միութիւնը կազմում է իրանի և Թուրանիկուր, որ իրար հետ կապում է բազմաթիւ իրար յաջորդող սերունդների մասին պատմուած տարրեր վէպեր. իսկ մեր այս մեծ վէպի միութիւնն է Հայոց և Պարսից պատերազմը: «Ոչ թողից զքեզ և ոչ որդուց քոց զըրէժ նախնեաց իմոց և զման Արտևանայ արքայի», Արշակ թագաւորի այս խօսքը առաջնորդ է սկզբում Հայոց համար կուռի մէջ և կարելի է ասել մնում է նաև մինչև վերջը: Բայց շուտով դրութիւնը փոխառում է. պարսիկները ուղում են հայերին հնազանդեցնել իրենց, և հայերը կուռում են աւելի իրենց անկախութեան համար: Այս է ընդհանուր կապը կամ ընդհանուր դրութիւնը, որի մէջ կատարուում են սերունդների յաջորդութեամբ բազմաթիւ վէպեր:

Ի՞նչ ընդհանուր միութիւն կարելի է տեսնել, օրինակ, մեր Սասնու ծուերի՝ չորս սերունդների մէջ: Միութեան տեսակէտից մեր հին վէպը նոյն իսկ աւելի բարձր է նորից, քանի որ նորի մէջ չկայ մինչև անգամ այն ընդհանուր դրութիւնը, ընդհանուր շան ու ինդիրը, պարսից և հայոց դարաւոր ձգտութերն իրար վերաբերմամբ, որ կայ հին վէպի մէջ: Սանասարի և իւր եղբօր, Առիւծաձև Մհերի, Դաւթի և փոքր Մհերի վէպերն իրարուց անջատ բաներ են և կապուած են զրեթէ միայն հօր և որդու կապով: Այդ ճիւղերից իւրաքանչիւրը նոյն իսկ մի քանի անկախ վէպերից ու զրոյցներից են կազմուած, բայց և այնպէս միասին մի վէպ են, որովհետև մի մարդու գլխի եկած բաներ են. և բոլոր սերունդների ճիւղերն ես միասին մի ընդհանուր վէպ են, որովհետև հերոսները հայր ու որդի են: Մեր «Սասնու ծուերի» կենդանի օրինակը բացատրում է մեզ մեր հին վէպի ընդհանուր յատկութիւնը. այն է Մամ-կոնից մինչև Սանուէլ պատմուածները նոյնպէս մի վէպ են կազմել և աւելի ևս հեշտութեամբ, քանի որ մի ընդհանուր դրութիւն գոնէ եղել է, որով յօրինուել է մի շղթայ, որի օղակները թէպէտ և մէկը միւսից անկախ՝ բայց և իրար հետ կապուած են եղել:

Այդ շղթայի ամեն մի օղակը, սակայն, որ մի անկախ վէպ կամ զրոյց է, ունեցել է հին վէպի մէջ, և ունի նոր վէպի մէջ, իւրաքանչիւրն իւր բարոյական գրութիւնը, որից ծագում է գործողութիւնը, որևէ սակաւ անգամ ազդում է նաև յաջորդ վէպի-

էջ, ուստի և երբեմն այս կամ այն մասի մէջ անկախ զրոյցները համեմատարար աւելի սերտ են կապւում իրար հետ: Վերլուծել հին և նոր վէպի ամեն մի օղակը և ցոյց տալ թէ ինչ բարոյական դրութիւն է կազմում գործողութեան հիմունքը, այդ մեզ շատ հեռուն կտանէր, Միայն նկատենք, որ մի քանի անկախ մասերի մէջ միութիւն չի երևում, կամ այն պատճառով, որ պատմագիրների մէջ չի պահուած, կամ որ ժողովրդականի մէջ ևս չի եղած, ինչպէս նոյնը տեսնում ենք մեր նոր վէպի մէջ: Դարձեալ՝ մեր հին վէպի, ինչպէս և նորի մէջ, կամ բազմաթիւ կրկին պատմուածիներ, կամ ինչպէս ֆրանսիացիք ասում են՝ double emplois, այսինքն միևնույն դէպքը, փոքր ինչ փոփոխուած ձեռվ, պատմուում է մի քանի գործող անձերի վրայ, կամ թէ միևնոյն դիպուածը փոխանակ մի անգամ պատմել պրծնելու՝ կրկնուած ձեռվ փոքր տարբերութիւններով մի քանի անգամ պատմուում է նոյն իսկ մի հերոսի համար: Ժողովրդական վէպ էական յատկութիւններից մէկն է այս, որ գտնում ենք մեր հին վէպի մէջ: Այսպիսի կրկին պատմուածքներ են անպայման հիւսիսական ազգերի արշաւանքները Խոսրով Կոտակի, սրա հօր՝ Տրդատի, սրա հօր Մեծն Խոսրովի օրով, և եթէ աւելի բարձր գնանք ըստ Խոսրինացու, Մեծն Խոսրովի հօր Վաղարշի օրով ևս, որ թռուն է վիպական Արտաշէսի, որի օրով դարձեալ արշաւում են հիւսիսային ազգերը: Այսպիսի կրկին պատմուածքներ են և պարսիկների բազմաթիւ յարձակութիւնները միևնոյն թագաւորի կամ զօրավարի օրով, ինչպէս Վասակի ու Մուշեղի: Խորենացին, օրինակ, մի յիրաւի ճակատամարտով վերջացնում է պարսից դէմ կորիւը Պապի ժամանակ, իսկ Բիւզանքը, որ հաւատարիմ է մնում ժողովրդական պատմուածքին, երեք անգամ Շապուհին յարձակուել է տալիս Հայոց վրայ: Հին վէպի կրկին պատմուածքներից յիշենք և Աղձնեաց բլեւչի պատամբութիւնը և պատժուելը, մէկ Խոսրովի օրով, երբ Բակուր բգեշին որդիներից մէկն ազատուում է: մէկ էլ Արշակ թագաւորի օրով, երբ ամենից առաջ Աղձնեաց բդեշին է անցնում Շապուհի կողմը, «և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ, որ Զորայն կոչեն, դրուսս զնէին և զատուցին վերեանց աշխարհն ի Հայոց»: Պապի ժամանակ Մուշեղը բոլոր պատամբիշխանների հետ, ինչպէս վերեկում գրեցինք, պատժում է և Աղձնեաց իշխաններին. «Ձերբակալ արարեալ զրդեաշխն Աղձնեաց, առնմին կոտորեցին զկանայս և զորդիս նոցա ի գերութիւն վարեցին»:

Հին վէպի մասին այսքանով բաւականանում ենք, որովհետև մեր նպատակը չէ առանձին ուսումնասիրութիւն անել այդ մա-

սին, այլ միայն Հայ ժողովրդական վեպի տեսութիւնն ամբողջացնելու համար՝ ցոյց տալ, որ մենք բացի Խորենացու մէջ յիշուած առասպելներից և վիազասանքից, ունեցել ենք և բուն պատմական վէպ, կամ աւելի ճիշտ՝ վէպեր:

## Հ.

## ՀԻՆ ՎԵՊԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Վեպի յարատեւուրիներ,—Ժողովրդի մէջ հին զրոյցները հեշտութեամբ չեն մոռացւում: Մի վէպ, ինչպիսին է «Պարսից պատերազմը», բոլորովին անհետ կորչել չէր կարող. դրանից այս կամ այն միջադէպը, այս կամ այն հերոսի անունն ու արարքը երկար դարեր պիտի ապրէին ժողովրդի բերանին իբրև հին զրոյցներ, իհարկէ կրելով դարերի ազդեցութիւնը և կերպարանափոխ լինելով: Ասել չի ուզիլ, հին վէպի միջադէպերից մէկը կամ միւսն աւելի այն կողմերում պիտի ապրէին, որոնց վերաբերում են. օրինակ՝ Սիւնեաց մէջ պիտի պահուէին Սիւնեաց իշխանների վերաբերեալ զրոյցները, Տարօնոյ և Սասնոյ կողմը՝ Մամիկոնեանց վերաբերեալ:

Մենք մեր պատմագիրների մէջ գտնում ենք մեր հին վէպից շատ քիչ հատուածներ կենդանի մնացած 5-րդ դարուց յետոյ, չհաշուած Խորենացին: Եթէ քիչ է, պատճառն այն չէ, որ շատ բան մնացած չի եղել, այլ մենք շատ մատենագիրներ չենք. ունեցել, որ հին վէպի մնացուղների վրայ ուշադրութիւն դարձնէին: Այդպիսի միջադէպերից են Սիւնեաց Անդոկի և Բարիկի և զլիաւորապէս Մամիկոնեան Մուշեղի զրոյցները:

Անդոկի և Բարիկի գրոյցը: — Սիւնեաց Անդոկը, Փառանձեմ թագունու հայրը, որ Մամիկոնեան տան փեսան է, յաճախ Տիրանի և Արշակի վէպի մէջ գուրս է գալիս իբրև կարևոր գործող անձն: Արշակի գերութիւնից յետոյ Պարսից Շապուհն առանձնապէս աւերում է Սիւնեաց աշխարհը. «Եւ զազգն Սիւնեաց առնմին զամենայն այր ի չափ հասակի կոտորեցին, և զկանայս սպանին և զամենայն մանը մանկտիւն ներբինիս հրամայէր տանել, և իսպացուցանել յերկիրն պարսից: Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ, որ եղեւ պատերազմ ընդ ներսէն արքայ Պարսից» (Բիւզ. Դ. 58): Մանուկի ժամանակ Սիւնեաց տան մնացորդներից առաջ են գալիս Բարիկ, Սամ և Վաղինակ. Բա-

բիկը դառնում է Սիւնեաց նահապետ և Մանուէլի նիզակակիցն է կուխների մէջ։

Սիւնեաց աշխարհի այս աւերման զրոյցն ահա ուրիշ ձեռվ պատմուած գանում ենք Մովսէս Կաղանկատուացու (հրատ. Մովսէս 1860. Բ. հատոր. Ա. գլ. եր. 81 հտ.) և Ստեփանոս Օքրելեանի մէջ (Մովսէս. 1861 գլ. Բ.—Փ. եր. 19 հտ.). Օքրելեանն այդ զրոյցն առնում է յասացուածոց սրբոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսին, որին անուանում է Քերթողահօքն Մովսէսի աշակերտ (եր. 19, 25, 26, 32, 39, 64, 67). Ըստ Կաղանկատուացու՝ զրոյցը գողովրդական ծագում ունի և առաջին անգամն է զրի առնուած։ Նա այսպիսի յառաջաբանով է սկսում. «Դանանին զրոյցը արենելից կողմից (հասկանալի է՝ Հայոց աշխարհի), որք ոչ են անկեալ ի գիրս հասադիր պատմազրաց, զորս պատշաճ վարկաք մակազրել ի տասն տողաչափութեան մերում»։ Երկուսի մէջ ևս կատարելապէս նոյն զրոյցն է, մեծ մասամբ բառացի նոյն, միայն Կոտղանկատուացին փոքր ինչ համառօտ է պատմում։ Հաւանօքն Կաղանկատուացին ևս առել է Պետրոս եպիսկոպոսի «ճանից» կամ «ներբռոզումից», վերջինիս յառաջարանով միասին, որով Կաղաննկատուացու յառաջաբանի դէմքը Պետրոսին է, այսինքն Պետրոսն է այդ զրոյցն առաջին անգամ զրի առնողը։

Զրոյցի մէջ պատմում է թէ ինչպէս, երբ Արշակի գերութիւնից յետոյ հայերն ընկնում են Պարսից Շապուհի իշխանութեան տակ՝ Անգոկ Սիւնին իրեն անպատուած է զգում Պարսից արքունիքում, ապստամբում է Շապուհից, աւերում Տիզրոնը, գալիս Սիւնիք, ամրանում Բաղաբերդում։ Շապուհը հրամայում է «ելանել ի Սիւնիս և գերել զիստուն և զանասուն»։ պարսիկները մի քանի անգամ կուռում են Անգոկի դէմ, բայց բան անել չեն կարողանում։ Երկիրը քսան և հինգ տարի աւել է մնում։ Անգոկը Հռոմայեցոց կողմն է անցնում։ Շապուհը մի պղնձի սահու է գնում, լի մոխրով, իւր զռանը, որ ով գայ՝ «կոփէին ի նմա և ասէին։ Սիւնեաց տէրութիւնն ընդ այս մոխրի ի վայր լիցի, և նոցա կեանքն և խորհուրդն»։ Բայց Անգոկի որդի Բաբիկը ծատեալ անցնում է Պարսից մօտ, ծառայում է բանակում, և մեծ քաջութիւն անելով՝ նախատինքի սանդը վերացնել է տալիս ու տէր դառնում Սիւնեաց։

Մուշեղի զրոյցները. — Վեպական ոգու ընդհանուր յատկութիւններից մէկն էլ այն է, որ նոյն իսկ ամենահին առասպեկները նոր կատարուած նման դէպքերի ազդեցութեան տակ միշտ նորագուելով և յարմարուելով նոր կեանքին՝ ժողովրդի մէջ պատ-

մւում են իբրև նոր բաներ, յաճախ բոլորովին նոր անուններով։ Ժողովուրդն այնքան հաւատում է այսպիսի պատմուածքներին, որ յաճախ ականատեսներ էլ են երեան գալիս, նոյն իսկ այնպիսի հին առասպելների համար, որ հեթանոսական աստուածներին են վերաբերում և գտնում են, օրինակ, Հնդկաց սրբազն գըրքերի մէջ։ Եւ ժողովուրդն իրաւունք ունի, որովհետեւ պատմութիւնը միշտ նորոգուելով կրկնում է. ամէն հին միշտ նոր է, և ամեն նոր՝ հին։

Այսպիսի վիպական նորոգութեան օրինակ է մեր Մուշեղի, հետը և Մանուէլի, վէպը, որի մէջ տեսնում ենք թէ ինչպէս դարեւրի ընթացքում քաղաքական կեանքի ազգեցութեան տակ վէպը կորցնում է ընդհանուր ազգային բնաւորութիւնը և զանում տեղական վէպ. «Պարսից պատերազմը» դառնում է «պատերազմ Տարօնոյ», որից անբաժան է և Սասունը. և վերջը նոր դէպը բրի ազգեցութեամբ աւելի ևս փոփոխուելով, կամ աւելի ճիշտ՝ հին վէպը նոր յօրինուելով՝ հին Պարսից պատերազմը դառնում է Սասուն կափւնախ արաբների, Բաղդատի խալիֆայի և ապա Մորայ մելիքի դէմ։

Մուշեղի վեպն ըստ Սեբէոսի. — Սեբէոսը, որ իւր պատմութիւնը վերջացնում է Մաւիասի միապետելուց (661թ.) յետոյ, 6-րդ դարի և 7-րդի սկզբի պատմութիւններից, որոնց ժողովրդական ձագումը յաճախ շատ պարզ երևում է պատմուածքի եղանակից։ Այսպիսի պատմուածքներից մէկն է Գ. գլխի պատմութիւնը (Ս. Պետր. 1879. եր. 36 հան.)<sup>1)</sup>։

1) Բ. և Գ. գլուխների թերթերը խառնուած են իրար. Գ. գլխից մի հատուած ընկած է Բ. գլխի մէջ, և այս հատուածի մէջ ևս յետ առաջ ընկած մասեր կան։ Այս աղաւաղումը յաջողութեամբ ուղղած է Ստ. Մալխասեանը (Սեբէոսի պատմ. և Խորենացի, եր. 105 հան.), բացի մի կառորից, որի մէջ ոռը (եր. 30) բառը ուղղութեալ է ընկած։ Մենք ուղղում ենք. «Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըստուան Խոսրով, որ (եր. 30) և արար Պատերազմ մի մեծ ի Մելիտինէ...» (եր. 34), Մալխասեանն այս հատուածի մէջ ոռը բառի տեղ դնում է «որպէս ասացի» բառերը, որոնց տեղն է հետեւալ հատուածի մէջ. «Քանզի խորհուրդ արարեալ խորինին արանց և համահարզանց և փուշտիպանաց արքային, զի սպանցեն զիրմիզդ և նստուցեն թագաւոր զորդինորա զԽոսրով» (եր. 31—32)։ Արդ վասն զի մայր Շապէոյ... և սրտիւ արիազոյն, որպէս ասացի (եր. 34), խորհուրդ արարեալ լուծանել զնա և առնել իւրեանց առաջնորդ... (եր. 32)։ «Որպէս ասացի» խօսքն այստեղ ակնարկում է վերեւում դրուած չխորհուրդ արարեալին»։ Այսկերպ ուղղուած ընազրի միջից «որ» բառը դուրս չի մնում։

Վահրամ Մերհեանդակ ապստամբում է Սասանեան Որմիզդ թագաւորից (579—590 թ.) աշխատելով վերացնել Սասանեան տունը: Որմիզդն սպանուում է և տեղը թագաւորեցնում են որդուն, ուժանուկ տղայց Խոսրովին՝ (590-628 թ.), որին քեռիքը փաթցնում են Յունաց մօտ: Վահրամը թագաւորում է ամբողջ Պարսկաստանում: Խոսրովը Յունաց Մօրիկ կայսեր (582—602 թ.) կողմից օգնութիւն է գտնուում: Երկու յոյն զօրավարներ գալիս են զօրբով կուտելու Վահրամի դէմ և Խոսրովին իւր հօր գահի վրայ նստեցնելու:

Ժողովուում են Խոսրովին օգնելու և Հայոց տշխարհի զօրքերը, որոնց զլուխն է Մուշեղ Մամիկոնեան: Պատերազմը խմբւում է Ասրպատականում: Վահրամը կոռւից առաջ բանագնացութեամբ փորձում է Մուշեղին իւր կողմը գրաւել խոստումներով, բայց չի յաջողում, և սաստիկ պարտութիւն կրելով փախչում է:

Խոսրովն ուրախի է, բայց նրա ուրախութիւնը թերի է. «զի ապրեցաւ արիատեացն այն (Վահրամ) և գնաց»: Մօտի մարդիկը պատասխանում են, «Չտիրատեացն զայն նոքա (հայք) զերծուցին. քանզի մերով աշաւք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան, և ետ նմա երիվար և զէն, և արձակեաց»:

Խոսրովը հաւատում է և ուզում է Մուշեղին նենդութեամբ իւր մօտ հրաւիրել և սպանել. բայց չի յաջողնաւմ. ապա Խոսրովի բարեկամ Մօրիկը Մուշեղին կանչում է պալատը, «և այլ ոչ ետես զերկիրն», աւելացնում է պատմագիրը: Նրան ուղարկում են Թրակիա, ուր բռնուում է և մի բարձր ծառից կապուելով սպանուում (եր. 52):

Այս իսկ վիպական պատմուածքը, որ Մերէոսի մէջ գեռ շատ տեղ բռն ժողովրդական գոյն ունի, որի հիմքը, սակայն, անպայման պատմական է, Բիւզանդի Մուշեղի վէպի մի նորոգուած պատմուածք է: Նոյնութիւնն ակնյայտնի է: Միակ էական տարրերութիւնն այն է, որ Յունաստանից յունաց զօրքերով իւր ըսպանուած հօր գահը ժառանգելու համար եկող թագաւորը ոչ թէ Հայոց Պապն է, այլ Սասանեան: Խոսրովը նմանութեան մէջ առանձնապէս աշքի է ընկնում այն, որ երկուսի մէջ և Մուշեղը թշնամի բանակի հետ հաղորդակցութիւն ունի և մեղադրուում է թէ կարող էր թշնամի թագաւորին սպանել բայց չի սպանում. և հօր գահը ժառանգող թագաւորը թշնամանում է Մուշեղին և ըսպանել ուղում նրան:

Անշուշտ Բիւզանդի մէջ Մուշեղի վէպը, իրեւ ծ-րդ դարու, ունի իւր ժամանակի դրոշմը. իսկ Մերէոսի մէջ՝ իւր դարինը: Ե-դ դարում հայ թագաւոր չկար. արաբներից առաջ հայ զօրքը

ծառայում էր Պարսից և Յունաց, և այս երկու հարիւր տարրոց ի վեր: Բնականաբար Մուշեղի վէպն ևս իւր նոր ձեր մէջ, հին էութիւնը պահելով, պիտի կրէր ժամանակի կնիքը: Նա դարձեալ հայ զօրքի գլուխն անցած կուռում է Յունաց զօրքի հետ միասին պարսից դէմ, բայց ոչ Հայոց թագաւորի որդուն իւր հօր գահի վրայ հաստատելու համար և ոչ ապստամբ հայ իշխանների դէմ, այլ Պարսից: Եւ նա իւր գախճանը գտնում է ոչ թէ ընթրիքի ժամանակ, այլ Թրակիայում, ինչպէս ժամանակի շատ հայ իշխաններ:

Մուշեղի վէպի մի ուրիշ պատմուածք պահել է մեղ և Յովհան Մամիկոնեանը, որի մէջ կան մեր հին վէպի և ուրիշ արձագանքներ ևս: Ուստի տեսնենք այդ գրուածքի մասին ընդհանրապէս:

Յօվհան Մամիկոնեան:—Յ. Մամիկոնեանի և ասորի Զենոռ Գլակի «Տարօնոյ պատմութիւնը» մի կեղծիք է, և կեղծիք երկումն ևս մի և նոյն հեղինակի, որ իրեն կրչում է Յովհաննէան Մամիկոնեան եպիսկոպոս: Կեղծիքն երկում է գրքի Յիշատակարանից, որի մէջ հեղինակն անում է կեղծած գրքերի համար մի սովորական գիւտի պատմութիւն Հեղինակը չգիտէ նոյն իսկ թէ ինքն երբ է ապրում. նա ասում է թէ իւր գիրքը գրել է պի ժամանակս թագաւորութեանն Հերակլեայ (610—641 թ.), և ի մահուն Խոսրովու (590—628 թ.), հրամանաւ Ներսիսի հայոց կաթողիկոսի (կաթողիկոսացած ոչ վաղ քան 642 թ.) և յիշխանութեան Մամիկոնեան Վահանայ, զոր մայրեններ Կամսարական կոչնես: Այս Մամիկոնեան Վահան Կամսարականը, սակայն, մի տեղ (եր. 56) արդէն մեռած է և իւր որդի Տիրանն է իշխում «յառաջ քան զգնախն Հերակլի ի պարսիկս» և երբ եւլանէ Հերակլ և սպանանէ զԽոսրով (590—628 թ.) ութ տարի յետոյ, ուրեմն 636 թուին, սպանւում է նոյն իսկ Վահանի որդի Տիրանը՝ Մահեղի քեռորդի Արդուահիմի դէմ կրուելիս: Մի ուրիշ տեղ, սակայն, (եր. 56), 681 թուին գեռ իշխում է նոյն Վահան Կամսարականը՝ Ներսէս կաթուլիկոսի հետ, որը այդ ժամանակ մեռած էր:—Այսպէս իւր կեղծած ժամանակի համար նոյնիսկ աեղեկութիւն չունի հեղինակը, և շատ պարզ է, որ չի կարող նա 7-րդ դարու մարդ համարուել, այլ ամենավաղը, 8-րդ դարու, մեր կարծիքով, ևս աւելի ուշ, 9-րդ գուցէ և 10-րդ դարու:

Ի՞նչ է Յովհ. Մամիկոնեանի գիրքը, «պատմութիւն Տարօնոյ»:—Ետա պարզ կերպով ժողովրդական զրոյցների մի ժողովածու, որ իրական պատմութեան հետ գործ չունի, և ընդհակառակն՝ ունի ժողովրդական զրոյցների ամենայն յատկութիւն:

Միամիտ ընթերցողն էլ դժուար թէ հաւատայ այդ պատմուածքների եղելութեանը. նոյն ինքն հեղինակն այդ զգացել է, որ Յիշատակարանի մէջ գրում է, «Ազաչևմ զմանկունս եկեղեցւոյ Աստուծոյ, զի յորժամ զշարագրութիւնս զայս ընդօրինակէք, մի ինչ թուեցի ծաղր ումիք, այլ և զիմ պատճեանն անպակաս և լի գրով գրումեսցիք զհետ գրելացդ»:

Զենոր Գլակի մասն ևս պատմական ոչ մի արժէք չունի. որովհետեւ՝ ինչպէս Գր. Խալաթեանը ցոյց է տուել (Զենոր Գլակ, վիեննա, 1893 եր. 75), «ոչ վաղ քան է դարբ», մեր կարծիքով 8-րդ դարուց ոչ վաղ, —քանի որ երկսի հեղինակն ևս մէկ է, — զանազան աղբիւրներից քաղած սարքած մի պատմութիւն է. միայն, կարծոււ ենք, աղբիւրների մէջ աւելի տեղ պիտի տալ «ազգային եկեղեցական յետին աւանդութիւններին», և որ գլխաւորն է մեզ համար՝ այդ աղբիւրների մէջ պիտի մտցնել նաև ժողովրդական աւանդութիւնները:

Այսպիսի ժողովրդական աւանդութիւններից ենք համարում Գիսանէ և Դեմետր աստուածների մասին պատմածները, Տըրդատի կոփւը Տարօնում, այլ և Յովհ. Մամիկոնեանի մասին՝ Մուշեղի և Գայլ Վահանի և այլոց մասին պատմածները; Կարծում ենք, ժողովրդական հիմունք ունի և քրմերի պատերազմը, որ մի կողմըն ենք թողնում մեր նիւթին չվերաբերելուն համար:

Դեմետր եւ Գիսանէ—Մամիկ եւ Կոնակ!—Ոչ մի հիմք չկայ կարծելու թէ Զենորի ամբողջ պատմութիւնը Դեմետրի և Գիսանէի մասին սարքած է ուշակելով» և «կերպարանափոխելով» Աղաթանգեղոսի պատմածը Աշտիշատի Վահեվահեան մեհեանի մասին (Խալաթ. եր. 53 հան), և իրքն թէ Զենորը «նկարագրելով հռչակաւոր Աշտիշատը» «զիսամամբ յանդէտս է ձևանում» Աշտիշատի աստուածների մասին և իրքն թէ յայտնի աստուածների փոխարէն նա Աշտիշատում դնում է Գիսանէի և Դեմետրի կուռքերը<sup>1)</sup>:

1) Խալաթեանի աչքից փախած է, որ Զենորը Աշտիշատը չի նկարագրում և այդ կուռքերն Աշտիշատում չի դնում: Զենորի համար Աշտիշատի կուռքեր և Դեմեդրի ու Գիսանէի կուռքեր շատ որոշ և տարբեր են, և երկուոն ևս յիշում է նա: Աշտիշատի կուռքերը կանգնոււ են երկու եղբայր Դեմետր և Գիսանէ. «Եկեալ յԱսիւաս և կանգնեցին զկուռսն զայնոսիկ յանուն կոոցն, զոր ի Հնդիկս պաշտէին» (եր. 36): Շատ տարին եր անցնելուց յետոյ այս երկու եղբօր որդիկքը «ելեհալք» «ի լեառն Թարքեայ... կանգնեցին երկուս կուռս, զմինն յանուն Գիսաննեայ, և զմինն յանուն Դեմետրեայ: Եւ ետուն նոցա ի սպասաւորութիւն զազգս իւրեանց: Քրմերի կոփւը սբանք են անում, թէպէտ և Աշտիշատի

Զենորն Աշտիշատի մեհեանների մասին երկբորդաբար յիշատակելով՝ խօսում է միայն Դեմետրի և Գիսամնէի մեհեանի մասին, սր կործանելով ո. Գրիգոր՝ տեղը եկեղեցի է շինուած, ո. Կարապետի նշխարքի մի մասն այստեղ զննելով (եր. 33, 36 հա.)։ Դա ո. Կարապետի վանըն է, Խնակնեան տեղիք։ Բացի սրանից Զենորը ո. Յովհաննու մասունքը զնիլ է տալիս և մի փոքր ձորակի մօտ՝ Եփրատից ձիու երկու կամ երեք արշաւանօք հեռու, ուր նոյնպէս եկեղեցի է շինուած ո. Գրիգորը։ Դա Ազաթանգեղոսի (եր. 470) պատմածն է, որից անցել է Զենորին։ Ազաթանգեղոսի մէջ երկու տեղ է յիշում, — Աշտիշատ և Աշտիշատից քիչ հեռու յանդիման մեհեանացն մօտ ի գետն Եփրատ», ուր ջրիները կանգնում և ուր վկայարան է շինուած ո. Գրիգորը ամփոփելով Յովհաննու մասունքը. իսկ Զենորն այս երկու տեղը յիշելով հանգերձ դնում է և մի երրորդ տեղ, Դեմետրի և Գիսամնէի կամ Խնակնեան տեղիքը, ուր նոյնպէս, ինչպէս ասացինք, ո. Գրիգորն ամփոփում է ո. Յովհաննու մասունքը։

Արդ պիտի կարծել թէ կամ Ազաթանգեղոսի (ինչպէս և Բիւղանդի, Գ. 3. 14. 16) յիշած Յովհաննու մատուաը նոյն է Զենորի ո. Կարապետի հետ, կամ տարբեր են այդ երկուսը։ Եթէ տարբեր են, այն ժամանակ պիտի կարծել թէ յետագայ դարերում հին ո. Յովհաննու մատուաը մօտիկ տեղերում Բարքէ սարի լանջին մի նոր վանք է շինուել ո. Կարապետի անունով, որի վրայ անցել է ո. Յովհաննու մասունքը Լուսաւորչի ձեռքով թաղելու աւանդութիւնը և այս աւանդութիւնը ժողովրդից առնելով յիշում է Զենորը, ապա բերում է նոյն աւանդութիւնն Ազաթանգեղոսից։ Իսկ եթէ նոյն են, որ մեզ աւելի հաւանական է թւում, այն ժամանակ պէտք է ընդունել, որ միենոյն Յովհաննու մատուան կամ ո. Կարապետի ծագումը երկու անգամ է պատմում Զենորը, մէկն Ազաթանգեղոսից առնելով, միւսը ժողովրդական աւանդութիւնից։ Երկու դէպքում էլ, ասում ենք, Զենորի բերածը ժողովրդական աւանդութիւնից է ծագում. որովհետեւ, ճիշտ է, մարդիկ իրենցից շատ քան կարող են ստեղծել, բայց նրանց

կուռքերի քրմերն ես մասնակից են (եր. 25, 29). Երբ Դեմետրի կուռքը կործանւում է, պաշտօնեայք կացն և ելեալ զնացին յԱշտիշատի կուռան (եր. 32), Այսունեան Աշտիշատի մեհեանին է ակնարկում (եր. 38) և կամէաք անցանել և զնալ ի տեղի մննենցին... Եր. 8. «Ասս իսկ որջացեալ էր մահ յերկուս տեղիս», որոնցից մէկն է ինսակնեան տեղիք, իսկ միւսն Աշտիշատինը։ Տես և եր. 28. «Երկու բազինք»։

առեղծածն ևս միշտ մի հիմքի վրայ հաստատուած է լինում։ Տեսնենք ինչ է առում Զենորը։

Դեմետր և Գիտանէ ցեղով ի Հնդկաց էին և եղբայր, դաւագրութիւն են սարբում իրենց արքայի դէմ, որն իմանալով այդ զօրք է ուղարկում նրանց սպանելու կամ երկրից հալածեցու։ Նրանք փախչում տպաստանում են Վաղարշակ թագաւորի մօտ, որի նրանց տալիս է Տարօնոյ երկրն իշխանութեամբ։ Այսանդ նրանք շինում են Վիշտապ քաղաքը, Աշտիշտատում էլ կանգնում են այսակեղի կուռքերը։ Տաօնուհինք տարի յետոյ թագաւորը սպանում է երկու եղբօրը, բայց իշխանութիւնը տալիս է նրանց երեք որդոց, որոնք կուառս, Մեշտի և Հոռեան աւաններն են շինուած իրենց անուշներով։

Այս պատմութեան մէջ պարզ երեսում է Մամիկոնեանց նախնիքների՝ Մամ-Կոնի զրոյցի մի մթնացած արձագանք յետին դարերի։ Ճիշտ է այսակեղ անունները տարբեր են, բայց նշանակութիւն չունի. անունները միշտ կարող են փոփոխուել, և մեր նոր վէպի մէջ էլ այդ տեսնում ենք լի ու լի։ Մամիկոնեանց ծագումն ըստ Բիւլղանդի, Խորենացու և Սերէսոսի շինական է, բայց այսակեղ երկու եղբայրը Հնդկաստանից, Երկու դէպքում ևս այդ պէտք է առնուի ոչ խսկական մաքով։ Հնդկաստան ու Զինաստան իրեն արենելեան հեռաւոր երկիրներ միշտ իրար տեղ դուրս են գալիս թէ մեր հեքաթների և թէ խօսքի մէջ։ Մեր նոր վէպի մէջ հենց, օրինակ, երկու եղբայրը՝ Մանասար և Բաղդասար (այլ և Բամելիք, Ասլիմելիք) կամ մի կուապաշտ թագաւորի որդիքն են, կամ Բաղդադու Խալիֆայի, կամ Հնդկաց մելիքի որդիքը և կոչւում են նաև Ապաւլ Քերիմ և Սինամ-Քերիմ։ Թէ Զենորի պատմածը Մամիկոնեանց նախնիների մասին է, երեսում է նրանից, որ նա Տարօնոյ երկիրը այս երկու եղբօր ուերունքների կալուած է զնում իշխանութեամբ, միաժամանակ և կոչում է «երկիրն Մամիկոնէից», «Մամիկոնէից» առւն. (Եր. 8, 9, 13, 15)։

Կուառ, Մեղաէս և Հոռեան, շարունակում է այնուհետև Զենորը, ենուում են Թարքէ լեռը և երկու կուռք են կանգնում, մէկը Գիտանեայ անունով, միւսը Դեմետրեայ, որոնց սպասաւորութեան են տալիս իրենց ազգը։ «Գիտանէս զի գիտաւոր էր, և վասն այնորիկ նորա պաշտօնեայքն գէսը էին թողեալ»։ Թրիստոնեայ զաւանալուց յետոյ էլ, աւելացնում է Զենոր, որպէս զի իրենց հին հաւատաը յիշեն՝ «Հուարեցան ծամ միայն թողուլ ի գլուխ մանեանցն»։

Արգեօք օգի՞ց է վերցրած այս աստուածների մասին պրածը,

թէ որ և է հիմք ունի: — Յայտնի է որ հին եկեղեցիներն ու վանքերը ընդհանրապէս որևէ հեթանոսական սրբավայրի տեղում են շինուած. Յովհաննու մատուիի, կամ ո. Կարապետի տեղում եւ, որի շնչքը նոյն իսկ Լուսաւորչին է վերագրւում, մի հեթանոսական սրբավայր պիտի ենթադրել. ջորիների կանգնելը իհարկէ մի պատճառ չէ, որ Աշտիշտից քիչ հեռու Յովհաննու մասունք ամփոփուի և մատոււ ու վանք շինուի: Այդ տեղ կամ մօտիկ տեղում եղել է հեթանոսական պաշտամունքի վայր, որի յիշողութիւնն է Զենորի մէջ եղածը Գիսանէի և Դեմետրի մասին:

Ի՞նչ են այս անունները: — Գիսանէ, Գիսանէս, անպայման գէս, զիսան բառից է, միայն յունական վերջաւորութիւն տուած, որպէս զի անձի անուն երևայ. նոյն ինքն Զենորը այդ անունը կապում է զիս բառի հետ: «Գիսանեայ տեղիք», «Իննակնեան տեղիք Գիսանեայ կոոց» (եր. 15 հտ. 32, 36) Բարբէ սարի վրայ է, ուր և ո. Կարապետն է շինում արդ. մինչև այժմ ևս այդ լեռը՝ որի վրայ շինուած է ո. Կարապետը, կոչւում է Մշոյ ծամ, որ նոյն է գէս: Պարզ է, որ «տեղիք Գիսանեայ» լեռան անուն էր թերևս պաշտելի լեռան:

Իսկ Դեմետր անունը պարզաբար յունաց դիցուհու, մայր երկիր Դեմետրի անունն է, որ երկրագործութեան, մշակութեան աստուածուհի է, և վիշապ լծած կառք է նստում: Սրա զուստը Պերսեփոնէն, որի պաշտամունքը նոյն է, ինչ որ իւր մօրը, կին է Հադէսի, որ ստորերկրեայրի կամ Սանդարամետրի աստուածն է, միանգամայն նշանակում է և ման: Ինքը Դեմետր աստուածուհին հայոց մէջ թարգմանուած է Սանդարապետ, Սանդարամետապետ կամ Սանդարամետ (տես Նոր Բառ գիրք հայկ. լեզուի, ուր բերած է վկայութիւն նաև «կոչումն ընծայութեան սրբոյն կիւրզի երուսաղեմացւոյց թարգմանութիւնից»: Խորենացու մէջ կայ «ինդրել հրաման պատասխանւոյ ի սանդարամետապետէն (կամ Սանդարամետէն) Պրոդէհադայց», ուր այս բառը դործածուած է Եգիպտացց Սերապիս աստուծու համար, որ գժոխսի, ստորերկրեայրի աստուածն էր, և որին պատկերացնում էին օձերով շրջապատուած. Սանդարամետ բառը բաւական դործածական է և նշանակում է երկիր, խորք երկրի, դժոխք. զործ է ածում և սանդարամետք անդնդոց: Արդ Իննակնեան տեղիքը, ուր Գիսանէ Դեմետրի կուռքերն են եղել, կոչւում է պրունի դժոխոց, որունի մանուք. «Չոր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք ժամանեն, նոյնպէս և այս տեղիս դուռն եր դիւաց, զի այնչափ էին գեքն ի տեղուղն Գիսանէ, որչափ ի սանդարամետս անցնեց» (եր. 8, 32): Այս ի նկատի ունենալով, ինչպէս և այն, որ մեր

Դեմետրի հնա ևս կապուած գտնում ենք օձ ու վիշապ, այն որ նա շինում է Օձ կամ վիշապ քաղաքը, կարծում ենք, որ Խնճակ-նեան տեղերում եղել է Սանդարամետ—Դեմետր աստուածութեան պաշտամունքը, և որ այդ տեղը համարուել է Սանդարամետի դռւու: Զպէտք է մոռանալ, որ մեր հին աստուածները, ոչ ժիայն մատենագիրների, այլ և հենց ժողովրդի մէջ յունական նոյն կոտ մօտիկ աստուածների անուններով են կոչուել: Այսպէս և Սանդարամետապետ կամ Սանդարապետ անուան տեղ գործ է ածուել և Դեմետր: Իսկ Գիսանէ, Գիսանեայ անունը, կարծում ենք, Դեմետրի մի մակդիր եղած պիտի լինի, որի յաջորդ սկարապետն ևս իրը «գիսաւոր» այրը է երեւում: Այդ մականունը յետոյ ըմբռնուել է իրրեւ իննակնեան տեղի կամ Մշոյ Շամի անուն, և վերջը իրրեւ առանձին անձնաւորութիւն և եղբայր Դեմետրի: Այս հին աստուածութեան կամ աստուածութիւնների անուններն այսուհետեւ փոխանակել են Մասիկոնեանց նախնեաց անուններին: Երկու առարեր առասպելներ շփոթուել են, և Գիսանեայ-Դեմետրի անունով պատմուել է Մամ-Կոնի զրոյցը:

Հիւսիսական ազգերի դեմ կոխիւ—Հին վէպից Զենոքի մէջ գտնում ենք և Տրդատի կոխել հիւսիսային ազգերի դէմ, որը սակայն կրած է զրական ազգեցութիւն: Դա նոյն կոխն է, որ Խորենացին (Բ. 27. 28.) Աղուանքում է զնում, Զենոքի մէջ այդ կոխը լինում է վրաստանում, ուր կուռում են միայն Տրդատի զօրքերը, և Տարօնում: Այսաեղ կոխ վարողն է ինքը Տրդատը Հոռմից վերագանալուց յետոյ՝ ինչպէս Խորենացու մէջ: Մեզ թւում է թէ հիւսիսանդի մէջ Տարօնում հիւսիսային ազգերի դէմ մի կոխ կայ յիշուած՝ միայն Տրդատի որդի Խորոզվի օրով: Սանէ-սանի զօրքերը տարածւում են ամբողջ երկիրը, և նրանց մի մասը բանակ է զնում «ի լերինն որ կոչի Ցլու գլուխ»: Վաչէ զօրքվարը, որ այդ ժամանակ գնացել էր «զերկայն ճանապարհ» կողմանս Յունաց, գալիս յարձակում է հիւսիսայինների դէմ և ամենքին կոտորում: Այս կոսի տեղը, Ցլու գլուխ, որ թագաւորը բաշխում է Վաչէին իրրեւ քաջութեան պարզե (Բիւղ. 9. 7. 8), կարծում ենք՝ նոյն է, ինչ որ ուրիշ տեղ (Փ. 14) յիշուած Ցուլ լեռը, որ է Տարօնոյ Տաւրոս լեռը: Եթէ այս ենթադրութիւնը ճիշտ լինի, այն ժամանակ Բիւզանդի մէջ հիւսիսականների կոխ պատմում է Տարօնում Յունաստանի հեռաւոր ճանապարհց գարձեալ Վաչէի համար, ինչ որ Խորենացու և Զենոքի մէջ նոյն կոխը նոյն հանգամանքներով պատմում է Տրդատի համար՝ առաջնի մէջ Աղուանքում, իսկ երկրորդի մէջ՝ Տարօնում: Դրանք ժողովրդական վէպի նոյն միջադէպի արձագանքներ են՝ տարրեր

ձեռվ պատմուած։ Զենորի մէջ գտնուած ենք նոյն իսկ հին վէպի մի գիծ այս կոուի մէջ։ այն է Աղձնեաց իշխանի դաւաճանեն իւր թագաւորին և պատմուելը։

Տարօնյ պ ստեղագլիր—Մինոյն գրքի երկրորդ մասը, որ Յով հան Մամիկոնեանի անունով է յայտնի, մենք գրեթէ ամբողջապէս ժողովրդականից ենք ծագած համարում։ Ժողովրդական զրոյցն ու երգը իրբ աղջիւր զնում է հեղինակը մութը կերպով գոնէ պատմուածքներից մէկի համար։ Մմրատի նիզակակից Վարագ Պալունին մնձ կոտորած է անում, ուստի և ըլուրը, ուր կուտակուած էին պարսից գիակները, կոչւում է Վարագարլուր։ Մօտիկ գիւղացիք երգ ու պարով գիմաւորուած են յաղթական հայերին, «Ընդ առաջ եղեն նոյցա պարաւորքն և երգս առեալ բազուած ինչ իրաց՝ գովէին։ Որ և յետոյ ի հոտել գիականց և յորդնել շէր հանեալ ասէին։ Շիերան գաղանք զմարմինս գիականց Վարագայ, և գիրացան։ Կուզ կերեալ, ուստի որպէս զարջ և աղուէս հապարտ եղեւ քան զարիւծ, Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց։ և արջ, քանզի զոր ուտէն՝ չմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ։ Անգեղք, քանզի ագահը էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ, մկունք քանզի շատ կրեցին ի ծակն, ոտքն մաշեցան։»

Մի կողմ թողնելով Վարդ Պատրիկի կնոջ մասին պատմածը և վերջին երկու հատուածը Միծանայ խաչի և Տիրանի մասին, որոնք անկախ զրոյցներ են, մնացածը կամ հին վէպի մնացորդ են կամ անկախ տեղական զրոյցներ, որոնք սակայն հին վէպի շուրջն են խմբուած եղել։ Հին վէպից այստեղ մնում է զարձեալ Մուտեղի գրոյցը, որ պատմուած է հետեւեալ ձեռվ։

Նիխորճէսը սպանում է Պարսից Որմիզդ թագաւորին, որդին՝ Զամր Խոսրով փախչում է Յունաց երկիրը և Մօրիկից զօրք առնելով գալիս է նուաճելու իւր երկիրը։ Մշոյ տէր և Խութայ, Տարօնոյ ու Սասնոյ իշխան Մոււեղին Դուխնում Հայոց մարզպան է կարգում Խոսրովը և ինքը յունաց զօրքերով գնում զէպի Բահչ Շահաստան։ Յոյները հպարտութեամբ չեն ուզում Հայոց զօրքի հետ մի տեղ բանակել, այլ մի օրուայ ճանապարհ հեռու են բանակ զնում։ Այս ժամանակ Նիխորճէս թագաւորը յարձակւում է Մուշեղի վրայ, որ քաջալերով իւր զօրքերին և ո. Կարապետին օգնական կանչելով՝ յաղթում է Նիխորճէսին և նրա գլուխը կրտրում ձգում իւր մաղախը։

Խոսրովն ուրախ է և ուզում է պարզե տալ հայերին, բայց յոյներն ամօթով մնալով որ յաղթութիւնը հայերն են տարել, նախանձում են Մուշեղին, և Մօրիկը ուզարկում է Խոսրովին ասելու։ «Գիտե՞ս զու զայդ, որ արքայի մահու սպանայ Մուշեղ»։

Խոսրովը մատածում է դարրան մահու գործել Մուշեղին, կանչելով նրան իւր մօտ. բայց Խոսրովի քոյրը իմանալով հզրօր նենգութիւնը՝ իւսոց է տալիս Մուշեղին, և սա քառասուն իշխանի հետ գինուած ձեռվ զալիս է թագաւորի գրանի դուռը, «և ամենայն խոստ թեամբ առևեալ պատասխանի և ի լոյս ածեալ զմահու զարանն, թքակոծեցին զնա... Իրրև զայն լուաւ թագաւորն երկեաւ, քանզի մանուկ էր»: Ապա Յունաց զօրավարին էլ խիստ պատղամ է ուղարկում Մուշեղը, ու զալիս է իւր զաւառը:

Մինչեւ այստեղ Մուշեղի այս վէպը միենոյն զրոյցն է, ինչ որ Սերէսոսի պատմածը, միայն աւելի մանրտման է, ժողովրդական ձեռվ: Նոյնպիսի ժողովրդական բնաւորութիւն ունի և շարունակութիւնը, որ չկայ Սերէսոսի մէջ:

Սպանուած է Մօրիկը և Խոսրովը զնում է Մօրկի մահուան վրէժն առնելու: Նա մարգ է ուղարկում Մուշեղին, որ իւր հետ դայ. բայց Մուշեղը պատասխան չի տալիս: Խոսրովը վերադարձին իւր քեսորդի Միհրանին երեսուն հազար զօրքով ուղարկում է Տարօն Մուշեղի վրայ՝ հրամայելով նրան բանել և Պարսկաստան տանիլ, և զաւեղան, յորս նա զհաւատսն ունէր, կործանել և զիրօնաւորսն սպանանել: Ա. Կարապետի կրօնաւորները փախչում են Ողական, ուր ամբանում է և Մուշեղը. Պարսիկները գալիս են եօթն խոտանարակներին կոտորում: Մուշեղ իշխանը, որ հարիւր քսան տարեկան ձերունի է, այդ լսելով՝ «զաւուրս եօթն իրրև զմհսեալս զնէր անխօս»: Զօրքը խնդրում է նրան Միհրանին ճանապարհ զնել, և նա կանչում է իւր մօտ Վահանին, որին Տարօնի իշխան էր կարգել, երբ ինքը Դուինում Հայոց մարզպան էր, ուղարկում է Միհրանի վէմ: Վահանը, որ նոյնպէս ծեր է, ութունութ տարեկան, խորամանկութեամբ կոտորում է Միհրանի բոլոր զօրքերին և քառասուն հոգի միայն զրուցատար թողնում Պարսից թագաւորի համար: Իւր երկրում խաղաղութեամբ ժենում է Մուշեղը, և նրա տեղը Մամիկոնեան տան իշխան նըստում է Վահանը:

Խոսրովը երկրորդ անգամ Վահանի վրայ ուղարկում է Միհրանի հօրեղբայր Վահստանզին երեսուն հազար զօրքով: Վահանից հարկ և հնազանդութիւն են պահանջում, բայց նա մերժում է, և գարձեալ յաղթում պարսիկներին: Նոյն տարին մնանում է Վահանը և տիկն անցնում իւր որդին՝ Սմբատը, որ կոտի մէջ օգնական էր իւր հօրը:

Միւս տարին Խոսրովը, դարձեալ քսանհազար զօրք է ուղարկում Տարօն Սմբատի վրայ. հարկ և հնազանդութիւն ուղելու: Բայց Սմբատ յաղթում է Վահստանզին և մինչեւ անգամ նըա-

կնոջն ու որդուն գերում է և Այծից բերուը դնում: Վախտանգի եղբայրը՝ Սուրէն քսան հազար ժարդով գալիս է գնելու իւր եղբօր կնոջն ու որդուն, բայց սրան էլ Սմբատը ճանապարհ է դընում: Խոսրովը դարձեալ ուղարկում է Տիգրան անունով մէկին քսան հազարով, որ պահանջում է Մուշեղի և Գայլ Վահանի սակորները: Սմբատը սրան յաղթում է և ապա մեռնում է և տեղն անցնում որդին՝ Վահան Կամսարական, որ հօր օգնականն էր նրա կոփիների մէջ:

Տասնութ տարի յետոյ Խոսրովը յիսուն հազար զօրք է ուղարկում Տարօնը Վարդուհրի անունով մէկի ձեռով: Բայց Վահան Կամսարական իւր որդի Տիգրանի հետ յաղթում է Պարսիկներին, և վերջանում է Տարօնյ պատերազմը:

Այս վէպը իսկ ժողովրդական պատմուածք է, իսկապէս պատմուածքներ, որոնց մէջ որոշ տեղերում երեսում են խմբագրողի յաւելումները, ինչպէս են՝ եր. 16, խոտանարակների աղօթքը, գլուխների վերջերում (եր. 28, 29, 43, 49) դրած տեղեկութիւնները ո, Կարապեսի վանքի մասին, այլ և վանահայրերի և իշխանների յաջորդութիւնները: Խմբագրութիւնը կատարուած է շատ միամիտ կերպով: Բուն վէպն է Մուշեղի և Գայլ Վահանի մասը՝ մինչև Մուշեղի մահը, որ մի ամբողջութիւն է կազմած եղել: իսկ շարունակութիւնը խմբագրողի իրեն աւելացրածն է, բայց ոչ ստեղծածը: Տարօնի ժողովրդի մէջ եղել են տեղի անունների բացարձութեան համար բազմաթիւ տեղական զրոյցներ, որոնք կապուած են եղել Պարսից պատերազմի հետ: Այդ անկախ զրոյցներն ահա ժողովել է խմբագրողը և իրքն շարունակութիւն գրել Մուշեղի և Գայլ Վահանի վէպին: Այդ զրոյցներից մէկը կամ միւսը հաւանօրէն նոյն իսկ ժողովրդի մէջ ևս կապուած կը լինէին Մուշեղի և Գայլ Վահանի անուանը, բայց անհաւանական ենք համարում, որ նոյն ինքն ժողովրդի մէջ այն զրոյցներն 'ի մի համախմբուած լինէին և ժողովրդի մէջ ստեղծուած լինէը որդէցորդի յաջորդութիւնը՝ Մուշեղը, Գայլ Վահան, Սմբատ, Վահան Կամսարական, Տիգրան, թէպէտ և այդպիսի յաջորդութիւնը, ինչպէս տեսանք, յատուկ է մեր հին և նոր ժողովրդական վէպին: Ճիշտ է, Գայլ Վահանի զրոյցի մէջ ևս, ինչպէս և մեր արդի վէպի մէջ, կան երկու անուան, Առաջն և Կորի, բացատրութեան զրոյցներ (եր. 24, 28), բայց այնուհետև Գայլ Վահանի զրոյցի վերջը և յաջորդների զրոյցները ամբողջապէս, կարելի է ասել, կազմուած է այսպիսի տեղական զրոյցներից՝ որոնք անուններ բացատրելու համար են շինուած: Այս հանգամանքը ստիպում է մեզ ընդունել, որ հեղինակն է յաջորդութիւնը սարքել. որովհետեւ

չենք կարող կարծել թէ ժողովրդի<sup>1)</sup> մէջ հէնց տեղական անունների բացատրութեան զրոյցներից կազմուած լինէր մի յաջորդութեան շղթայ: Դրանք անկախ զրոյցներ են եղել, և ընդհանուր միայն այն են ունեցել, որ Պարսից պատերազմի շուրջն են խըմբուած եղել, և խմբագրողը հաւաքերով այդ զրոյցները՝ սարքել է յաջորդութիւնը նմանելով Մուշեղի և Գայլ Վահանի վէտին, այն է՝ ինչպէս Մուշեղի ծերութեան ժամանակ Գայլ Վահանն է կըռւում, նոյնպէս և Գայլ Վահանի ծերութեան համար՝ նրան օգնական է որդին՝ Սմբատ: Սա էլ ծերունի է (եր. 41, 47) և իրեն օգնական է՝ որդին Վահան Կամսարական,—որան էլ իւր որդին՝ Տիրան:

Այդ բոլոր զրոյցները կարելի չէ ասել թէ միայն Մամիկոնեանց վրայ են պատմուած եղել: Գայլ Վահանի թռո Վահան Կամսարական, հաւասարեաւ մասումը նոյն Գայլ Վահանն է, կրկին պատմուած: Բայց Կամսարական ժականունը ցոյց է տալիս, որ նա Մամիկոնեան չէ եղել, ինչքան էլ խմբագրողը բացատրէր թէ նա «մայրենիօք» այդպէս է կոչուել: Վահանի որդի Սմբատի անունը յիշեցնումէ Սմբատ Բագրատունուն: Նրա վրայ էլ կայ պատմուած (եր. 44) Սմբատ Բագրատունուն Մեհրութանին պասկելու պատմութեան նման մի բան: Պարսից զօրավարը մարդ է ուղարկում խոսանալով մեծութիւն, միայն թէ Մուշեղի և Գայլ Վահանի ոսկորները տայ իրեն: Եւսկ նորա կալեալ զպատգամաւորն, հրացոյց շամփուր մի երկաթի, և եղ պսակ շուրջ զճակատովն և ասէ: Լաց տեսանեմ թէ վասն քո քինչ պարզես տայցէ ինձ, որ ես քեզ պսակ եղիր: Այս Սմբատի անունը հին վէպի Սմբատի մի արձագանք է լոկ, ինչպէս և Մուշեղը հին վէպի Մուշեղն է:

Իսկ մվ են Գայլ Վահան և Վահան Կամսարական, որոնց վըրայ գալիս են պարսից զօրավարները, և որոնց տեղ մենք կըսպասենք, որ հին վէպի Մանուէլ Մամիկոնեանը դուրս գար: Գայլ Վահանի անունը, կարծում ենք, փոխանակած է Մանուէլեան 5-րդ գարու հերոս Վահան Մամիկոնեանի Պարսից դէմ վարած կոփւների աղղեցութեան տակ: իսկ Վահան Կամսարականի անուան

1) Զհաշուած Պորպէս, Գարհար, Գրգուռ անունների համար զրածները, մենք այդաեղ գտնում ենք հետևեալ անուններն ու գրանց զրոյցները. Առինչ (եր. 32), Մահու ագարակ, Թիլ (եր. 34), Մահու բլուր (36), Այծից բերդ (36, Սրեմաձոր, Սրինց ձոր, Գողոց աղբիւր (39), Ժողովը (40), Թմրբաձոր, Վարազարուր, Շիրականիք (42), Հոնընկէց (44, 46), Մոգուց գերեզման (45), Հանդիսեանք (47), Յետսանկ (48), Մահու առիթ (47), Եռւրայ (48), Ներքին Անկնիս, Վայր Անկնիս, Պաղակ, Փանդիկ 52), Հայկերտ (53):

մէջ մնում է յիշողութիւն Արշաւիր Կամսարականի որդիներից՝ Վահանի, որոնք գործակից էին Վահան Մամիկոնեանին՝ սրա վարած կռիւներում ընդդէմ պարսից Սուրէն, Միհրան և ուրիշ զօրավարների: Թէ Վահան Մամիկոնեանի մասին զրոյցներ են նդել, երեսում է Սերէոսից, որին ծանօթ չէ Ղազար Փարտեցու պատմութիւններից առնելով՝ Փարտեցուց տարբեր պատմում է Վահանի ապստամութիւնը, պարսիկներին հալածելը: Այս Սերէոսը պատմում է թէ ինչչէս Վարդան Մամիկոնեանը ապստամութ է Խոսրով Անուշ Ըստան թագաւորից, սպանում է Սուրէն մարզպանին: Թագաւորն ուղարկում է Վարդանի վրայ Միհրան անունով մէկին, ապա և ուրիշներին: և նոյն իսկ ինքը թագաւորն է զալիս Վարդանի վրայ, բայց նա էլ յաղթւում է և իւր կողմը գերի թողնելով Հայոց ձեռին՝ փախչում է: Այս Վարդանի յիշողութիւններն են անշուշտ որ մնացել են Տարօնոյ պատերազմի մէջ, միայն Վահան ու Սմբատ անունների տակ:

Վարդան Մամիկոնեանի մասին շատ բան չգիտենք. իսկ Վահանի բնաւորութիւնը յայտնի է Փարտեցուց, որը շատ լաւ բնորոշում է Վահան Վաղարշ թագաւորի բերանով. «Մի գուցէ, ասում է Վաղարշ, յղեալ քո առ Վահան՝ և նա պատճառանօք բաղցը խօսելով ընդ քեզ՝ խաբից զքեզ և վնաս ինչ առնիցէ. Վասն զի այրն ինքն բաջ է և բազմավիշ է. բանզի և ցայժմ ոչ այնքան այնպիսի գործեաւ վճարեաց նա և որք ընդ նման էին՝ լոկ քաջութեամբ» (եր. 488): Եւ այդ բնաւորութիւնը երեսում է Վահանի բոլոր արարքների մէջ, երբ նա կոտորում է պարսիկներին: Նոյնպիսի բնաւորութիւն գտնում ենք և Տարօնոյ պատերազմի մէջ Գայլ Վահանի համար: «Յիհրաւի է ինձ անունդ (Գայլ), ասում է ինքը հերոսը, քանզի գամ կոտորեմ, երթամ և այլ գամ»: Բայց այդ Գայլի նման կոտորող Վահանը ոչ այնքան քաջութեամբ, ճակատ առ ճակատ կուռելով է յաղթում թշնամիներին, որքան խարէութեամբ. խորամանկութեամբ: Նա «իմաստութեամբ» որսում է պարսիկներին և թակարզի մէջ ձգելով՝ ջարդում է Ժողովուրդը՝ սովորաբար, և ոչ միայն մեր մէջ, խորամանկութիւնը խելք է համարում, իսկ խորամանկութիւնը կոսւի մէջ «իմաստութիւն» է մեր Տարօնոյ պատերազմում: Մինչ հայ իշխանները, գլխաւորապէս Գայլ Վահանը, այսպէս իմաստուն են հանդիսանում, պարսիկներն անմիտ են և խարւում են: Շատ պարզ երեսում է, որ այդ զրոյցների մեծ մասը պատմուել են պարսիկներին ծաղրելու համար: Ժողովրդական ծաղըն ու զուարճախօ-

սութիւնը շարունակ ցոյշում է Տարօնոյ պատերազմի մէջ: Մաղ-  
րական է նոյն իսկ այն երգը, որ բերուած է Վարազարլրի համար:

Տարօնոյ պատերազմի մէջ առանձնապէս աչքի է ընկնում և  
ու Կարապետի կատարած դիրը: Ճիշտ է, հեղինակն իւր կողմից  
աշխատել է բարձրացնել անդական սրբավայրի նշանակութիւնը,  
բայց նրա աւելացրածն ու ժողովրդականը տարբերուում են: Վէ-  
սի ու զրոյցների մէջ հէնց ու Կարապետը միծ տեղ է բռնել:  
Թշնամիների նպատակներից մէկն է Հայոց հաւատի տեղը կոր-  
ծանել և հայ կրօնաւորներին սպանել եւ պարսիկներն այդ ա-  
նուում են: Ս. Կարապետի կրօնաւորներն իրենք ել հարկաւոր դէպ-  
րում մասնակցում են իշխանների վարած կռուին, և ինքը ու Կա-  
րապետը օգնում է հայերին՝ երեկով կռուի մէջ իրրեւ այլ մի  
զիսաւոր, որ լոյս փայլէր ի հերաց նորա, և զաշս թշնամեացն  
կուրացուցանէր» (Եր. 54, 48): Սրանք ժողովրդական պատմուածք-  
ներ են:

Ամժոփելով մեր զրածները Սերէսոսի և Ցովհուն Մամիկո-  
նեանի մասին՝ մենք զանուում ենք, որ Սերէսոսը ժամանակազրա-  
կան տեղնեկութիւնների մէջ դրուած՝ բերել է հին վէպից հա-  
տուածներ. Նախ Մամիկոննեանց նախնի եղայրների՝ Մամիկո-  
նեանի Հայաստան գալը, ապա նրանց սերունդներից (Հաշուած  
Վարդանանց պատերազմը, որ եղիշէից է առնուած, թէպէտ և Կար-  
միր մականունը և ժողովրդականին է ակնարկում) Վահանի, Վար-  
դանի և Մուշեղի մասին զրոյցներ: Նոյն ձեռվ հին վէպից հա-  
տուածներ գտնուում ենք զանազան տեղեկութիւնների մէջ ցրուած և  
Ցովհուն Մամիկոննեանի մէջ, հետը վերցրած և Զենորի մասը:  
Այստեղ ևս պատմուած է երկու եղրօր Հայաստան գալը և Տարօ-  
նուում հաստատուելը միայն աստուածութեան կամ աստաւածութիւն-  
ների հետ շփոթուած. ապա մի կոիւ հիւսիսային ազգերի դէմ,  
յետոյ Մուշեղի լրոյցը և նոր Գայլ Վահանի և միւսների մասին:  
Երկու ժամանագրի մէջ ևս նիւթը գրեթէ միենոյն է, միայն Սե-  
րէսոն անշուշտ աւելի պատմական ձեռվ է և մօտիկ է իրական  
պատմութեանը և Վահանի ու Վարդանի արարքները Մուշեղից  
առաջ է զբած, իսկ Ցովհուն Մամիկոննեանը աւելի ժողովրդական  
ձեռվ է պատմած. Վարդանի մասին, որ հաւաստեաւ էտովէս պատ-  
մական է, չկայ, այլ միայն Վահան և միւսները, բայց Մուշեղից  
յետոյ: Երկու ժամանագրի մէջ ևս դրանք հին վէպի ժողովրդա-  
կան արձագանքներ են, որոնք նման լինելով հանդերձ՝ իրարուց  
տարբեր են: Կատարեալ նմանութիւն պահանջել ի հարկէ չենք  
կարող, քանի որ միննոյն աղքիւրից և միակերպ չեն օգտուած  
այդ երկու հեղինակը որոնք ժամանակով ևս անպայման իրարուց

հեռու են: Չպէտք է մոռանալ, որ ժողովրդի մէջ նոյն իսկ միևնոյն ժամանակում նոյն զբոյցները տարրեր տարրեր ձեւրով են պատմում:

Առանձնապէս Մուշեղի վէպի համար պէտք է նկատել, որ Տարօնոյ պատերազմի մէջ և Մուշեղը կռւում է, ինչպէս Սերէսոսի մէջ, պարսից գահի ժառանգի համար: Ճիշտ է, այստեղ Մուշեղը չի սպանում, բայց վերջը նա կռուին մասնակից չէ, և Վահանը Մուշեղի մահուան վրէժ առնելու կարիք չունի, ինչպէս Մասուէլը, այլ նա միայն վերջինիս կռիւներն է անում պարսից դէմ: Միւս կողմից՝ վէպը կորցրել է ընդհանուր ազգային բնաւորութիւնը և գարձել է տեղական զրոյց Տարօնոյ, որի հետ է և Սասունը: Սասունցիք արդէն, իբրև Սանասարի ցեղ, մասնակից են կռիւներին: Հայ թագաւոր չկայ, բայց կռիւը գեռ պարսից դէմ է: Երկրում իշխում են պարսիկները, որոնցից ապստամբում են Տարօնոյ և Սասունոյ տէրերը և կռւում են տեղական անկախութեան համար: Պարսից կողմից գլխաւոր ձգտումն է հպատակեցնել հայերին և հարկի տակ դնել նրանց՝ քանդելով նրանց սրբավայրը: Հայերը միշտ յաղթող են գուրս գալիս: Տարօնոյ պատերազմի այս ընդհանուր բնաւորութիւնն այնուհետև մնում է նոր վէպի մէջ, միայն նոր պատմական դէպքերի ազդեցութեան տակ կերպարանափոխուած: այն է պարսից տեղ արաբացիք են անցնում և Տարօնի տեղ Սասունը, որ յետազայ գարերում աւելի նշանաւոր գեր է խաղացել: Այդ անցման մի պատմուածք մենք տեսանք Տարօնի վէպի մէջ, որ վերևում դրինք:

Սասունոյ Սանասարի որդի Մուշեղի:—Տարօնի վէպից իմանում ենք, որ Տարօնոյ և Սասունոյ տէր Մուշեղը զարձած է Սասունցոց նախնի Սանասարի որդի՝ Մուշ անունով, նա Սասունոյ տէրն է, իսկ Տարօնը յետ է մղուած՝ գառնալով նրա նշանած կամ կինը: Ուրիշ խօսքով վէպի գլխաւոր կննտրոնը Տարօնից արդէն փոխադրուած է Սասուն, և Մուշեղի հին վէպը միացած է Սասունոյ աւանդութեանը: Այս տեղափոխութիւնն ու փոփոխութիւնը շատ հեշտութեամբ պիտի կատարուէր, քանի որ հին Մուշեղը միանգամայն և Սասունոյ տէրն է, և նրա նախնի երկու եղբայրների Հայաստան գալու և Միմ լեռան ստորոտում՝ Տարօնում բնակելու աւանդութիւնն ըստ չութեան միենոյն է, ինչ որ Սանասարի և իւր եղբօր աւանդութիւնը: Յովհան Մամիկոնեանի մէջ արդէն, ինչպէս տեսանք, Մամիկոնեանց ծագման աւանդութիւնը մթնացած ու շփոթուած էր ուրիշ աւանդութիւնների հետ, ուստի և հեշտութեամբ նրա տեղը կարող էր անցնել Սանասարի և իւր եղբօր աւանդութիւնը:

Մի ուրիշ էական փոփոխութիւն էլ այն է, որ Սասնոյ Մուշեղը կուռում է ոչ թէ պարսիկների դէմ, այլ արաբացիների. և վէպն ունի արաբական շրջանի բնաւորութիւն, մինչ Յովհանն Մամիկոնեանի մէջ այդ ազդեցութիւնը չի երևում: Արդարեւ, այս տեղ ևս Մուշեղի յաջորդներից Տիրան Մամիկոնեանը կուռում է Արաբացոց դէմ. բայց նա մի անկախ գրոյց է, որը կարող է և իւր պատմական հիմունքն ունենալ, քանի որ արաբները Հայոց վրայ Տարօնի կողմից ևս յարձակում են դործել: Այս պատմական յիշութեան և զրոյցի ազդեցութեան տակ հէնց Մուշեղի վէպի մէջ հին պարսիկներին կարող էին փոխանակել արաբացիք:

Այսպիսի փոփոխութիւնների հետ Տարօնի վէպը պահում է գեռ հին վէպի մի քանի էական գծեր. Մուշեղը իւր հօր հետ կուսակից է Յովհանց և կուռում է նրանց հետ միասին, ճիշտ է՝ ոչ Հայոց թագաւորի որդու համար, ինչպէս Բիւզանդի մէջ, և ոչ պարսից թագաւորի որդու համար, ինչպէս Սերէսուի և Յովհանն Մամիկոնեանի մէջ, այլ Միջագետքի մի թագաւորի, Պերոպի որդի Շահրիմամի համար, որ թէպէտ և հոռմայեցի է կոչում, բայց իւր և իւր հօր անունը պահում է գեռ պարսկականի յիշողութիւնը: Հին վէպից է անշուշտ և Արզնի տեր Բակուրի դաւաճանելը հայերին և հաւատան ուրանալով արաբացոց կողմն անցնելը, Դասդնեաց Բակուր բղեսիսի դաւաճանութիւնն է և պարսից կողմն անցնելը:

Հին վէպի մնացորդներ նօրի մեջ:—Դժբախտաբար մենք չունենք մեր վէպի բազմաթիւ հին ու անթերի պատմուածքներ և Տարօնի վէպից յետոյ անմիջապէս ստիպուած ենք նոր վէպի պատմուածքներին անցնել, որով վէպի զարգացման շրջանները մութիւ ու անորոշ են մնում. բայց և այնպէս ունեցած մի քանի հին պատմուածքներից, թէպէտ և թերի, կարողանում ենք ըմբռնել հին վէպի կերպարանափոխութիւնը, որով նոր վէպն է կազմուում: Միւս կողմից՝ նոր վէպի մի քանի կենդանի, մեր աչքի առաջ ունեցած, յատկութիւններից հասկանալի է լինում մեզ համար այն փոփոխութիւնը, որ Բիւզանդի Մուշեղի վէպը կրել է Սերէսուի, Յովհանն Մամիկոնեանի և Վակիդիի մէջ:

Տարունի վէպի մէջ պարսիկներին, տեսանք, փոխանակել են արաբացիք, որոնք և մնում են նոր վէպի մէջ, միայն շատ բնականորըն 7-րդ դարու արաբների փոխանակ հանդէս է գալիս Բաղդադու խալիֆայութիւնը, որ աւելի նոր ժամանակի յիշողութիւն է, և որի հետ աւելի շատ յարաբներութիւն են ունեցել Տարօնի և Սասնոյ յիշանները: Միւս կողմից՝ մեր վէպի մէջ կենդանի կերպով տեսնում ենք ինչպէս Բաղդադի խալիֆաներն, իրեւ-

ւելի հին ժամանակի յիշողութիւն, տեղի են առջիս նորագոյն Եղիպտոսի, Մորայ մելիքներին, և մի քանի պատմուածքների մէջ մինչև անդամ չեն յիշատակւում: Հին թշնամի ազդի տեղը նորի անցեալը կատարւում է ուրիմի ժամանակադրական կարգով: Բայց ինչքան էլ հին հերոսին կամ ազգին փոխանակում են նորերը հինը երկար ժամանակ դեռ մնում է այս կամ այն պատմուածքի մէջ կամ մենակ, կամ նորի հետ միասին, մինչև հետզետէ յետ մզուելով մթնանում է և վերջը նոյն իսկ մոռացութեան տրւում: Այս տեսնում ենք նոր վէտի մէջ Բաղդադու խալիքաների վերաբերմամբ. նոյնը պէտք է ընդունենք և պարսիկների համար:

Պարսիկների անունը ճիշտ է մենք չունենք գոնէ միզ ծանօթ պատմուածքների մէջ. բայց հին վէտի Պարսից Շապուն արքայի անունը գեռ մնում է իրրե Շապի արքան, կամ աւելի ազաւազուած՝ Նրային Խորասական (1-ն 169 հան. 3-րդ 46 հան. 57 հան.): Դա Դաւթի, հին Մուշեղի փոխանակի, ոսոխն է, որ իրրե փայլւան է հանդիսանում: Շապի արքան փայլւանի հետ միասին, կամ նրա փոխանակ, նայելով պատմուածքներին՝ նոյն գերը կատարում են Խը (խոյ), Համզայ Լուայ, Համզայ փահեան-ները, Օզան Տողան թագաւորը կամ թագաւորները «Աջու էն եա-նէն». կամ Զինմաշինի թագաւորը, Հալաբայ թագաւոր, Լանգրադ թագաւոր և ուրիշներ (1-ն 169 հան. 2-րդ, 42 հան. 3-րդ 45 5. հան. 124 հան. 3-րդ. 485 հան. 5-րդ. 525 6-րդ, 48. 7-րդ. 33 հան. 9-րդ. 388 հան. 447)—որոնք զանազան ժամանակների յիշողութիւն են, և որոնց բոլորի հետ կուռում է Դաւթի և բոնը-ւում ու շղթայում է. բայց ազատում է Զէնով Յովանի օգնութեամբ: Ուրիշ պատմուածքի մէջ Շապի արքան փայլւանի դերը կատարում է Բաղդադու խալիքան և նոյն իսկ Մորա մելիքը, ուրոնց նշանածին առնում են Դաւթի կամ Արլազ (որը իւր որդի Դառնիկ որբիկի հետ Դաւթի և Սանասարի փոխանակն է), ուստի և կուի են զալիս Դաւթի կամ Արլազի ու սրա որդի Դաւ-նիկ որբիկի (Դաւթի) վրայ: Այս մինոյն միջադէպը կրկնուած պատմոււմ է և Մհերի համար, որ տանում է Հալաբայ թագաւորի նշանածին, և թագաւորը խորամանկութեամբ բռնում է նորի մէջ և ձգում Մհերին, բայց սա հորից ազատում է մի պառակի օգնութեամբ: Հալաբայ այս թագաւորին փոխանակում է և Շապի արքան, միայն ոչ Խորասական կամ Խորասանու, այլ Լուսուայ, որ շփոթութիւն է անշուշտ:

Այսպէս տեսնում ենք՝ հին վէտի պարսից Շապուն արքան, Մուշեղի ոսխը, նոր վէտի մէջ գեռ մնում է Շըպըրան Խորասա-կան կամ Խորասանու, Շապի արքան անունով իրրե ոսխ Դաւ-

թի կամ, նոյն պարագաներով, նրա որդի Մհերի, Բայց նրան փոխանակել են յաջորդարար՝ պատմական դէպքերի ազգեցութեան տակ՝ ի միջի այլոց Բաղդազու խալիֆան և Մսրայ մելիքը։ Հին ժամանակ անշուշտ դեռ երեար այս կամ այն պատմուածքների մէջ՝ Շամպի արքան գլխաւոր դերն էր կատարում, մինչեւ որ յետ մղուելով Բաղդազու խալիֆայի և ապա Մսրայ մելիքի առաջ՝ համեմատարար երկրորդական դեր է առել, այն է պարսից գաշնակից Բակուրինը։

Այսպիսի փափոխութեամբ նսեմացել և աւելի ևս աննշան են դարձել և հին Մուշեղն ու Պապ Բագաւորը։

Հին վէպի Հայոց թագաւոր Պապի անունը նոր վէպի մի պատմուածքի մէջ միայն գտնում ենք, և Լալայեանի ձեռագիր պատմուածքի մէջ, որ այս յօդւածը գրելուց յետոյ բարի եղաւ մեզ յանձնելու։ Պապի անունը. որ իրեն յաւելւած մացնում ենք այստեղ, հաստատում է մեր կարծիքները, և հաւասացած ենք, որ ապագայում նոր պատմուածքներ այս կարծիքը բոլորվին կը ճշանան։ Պապը, ինչպէս անուան ստուգաբանութիւնը պահանջում է, դարձել է մեր գիւղազների պապը, այսինքն Ծովելալ կամ Փիրզակ խանումի և Քեսի Թորոսի հայրը, ուրիշ պատմուածքներով կամ լոկ խաչապաշտ Հայոց թագաւոր է կոչւում, կամ խաչապաշտ Ղումքիկ թագաւոր։ Պապը հայոց թագաւոր է ըստ վէպի և նստում է Կուպուտկողում։ իսկ Կապուտկող անունը, ինչպէս ոկրում ես նկատել ենք, շվոթուած կարող է լինել հին Եպապուտայ (նոյն և Խանդութի բերդ) Արտագերից բերդի հետ, որ հին Պապի և Մուշեղի վէպի մէջ մեծ դեր է կատարում. այստեղ յայտնի է ամրանում Փառանձնմ թագուհին, որ գերւում է Շապուհ արքայից։ Նոր վէպի մէջ Հայոց Պապ թագաւորի (խաչապաշտ Ղումքիկ) թշնամին է փոխանակ Շապուհի ինսրէ Մենքերիմ, կամ Բաղդազու Խալիֆան, Մսրայ մելիք կամ լոկ կուսպաշտ թագաւոր, որ յարձակուում աւերում է մեր Հայաստանը ու հայ ազգը փչացնում և գերի տանում կամ բռնի կին առնում Հայոց Պապ թագաւորի աղջկան։

Հին վէպի և Տարօնոյ պատերազմի Ողականի և Մշոյ տէր Մուշեղը նոր վէպի մէջ դեռ Մշոյ թագաւոր է. բայց դարձեալ ոչ ժամանակակից պարսից թագաւորների, այլ նրանց յաջորդ Բաղդազի խալիֆայի ինչպէս Տարօնի վէպի մէջ Մուշ (եղ) ը արարացոց ժամանակակիցն է, որ մի քանի անգամ արշաւում է Հայոց վրայ, յատկապէս Մշոյ և Կարապետի վրայ. հայերը սկզբում լազմական են և յետոյ ո. Կարապետի օգնութեամբ յաղթում են նրան։ Մուշեղը այնքան յետ է մղուել, գոնէ ծանօթ

պատմուածների մէջ որ սինչեւ անգամ իւր քաջ բնաւորութիւնը կորցրել է. նա վախենում է Բաղդադու խալիֆայից. «Էնի գօրընդեղ թագաւոր ա. կըդայ մեր առ ու հեսիր կըտանայ» (3-րդ 15). Մուշեղը էլ ուրիշ դեր չունի մեղ ծանօթ պատմուածքների մէջ, որովհետև նրա դերն ամբողջապէս իւր վրան է արել Դաւիթ Բագրատունին, որ և դարձել է Սանասարի որդի կամ թռու:

Դաւիթ Բագրատունու ժամանակից է, տեսանք, և Զէնով Յովանը: Մեր վէպի պատմուածքներից պարզ երևում է, որ այս հերոսի տիպը ևս 9-րդ դարու դէպեհը ազգեցութեան տակ չէ մտել վէպի մէջ, այլ միայն Խութեցի: Յովանի անունը փոխանակել մի աւելի հին անուան Քեռի Թորոսին. միայն զա այն աստիճանի դեռ յետ չէ մզել Քեռի Թորոսին, ինչպէս Դաւիթը Մուշեղին: Քեռի Թորոս և Զէնով Յովան իրօք նոյն գործող անձն են վէպի մէջ. մի քանի պատմուածքների մէջ Քեռի Թորոսն՝ իրքն աւելի հին ժամանակի անուն՝ բոլորովին դուրս է ընկել՝ տեղի տալով նորագոյն Զէնով Յովանին. մինչ ուրիշ պատմուածքների մէջ Զէնով Յովանի անունը չկայ և միայն Քեռի Թորոսն է Դաւիթին հովանաւորողն և ննջութեան մէջ օգնողը: Կան պատմուածքներ, որոնց մէջ Քեռի Թորոսն ու Զէնով Յովանը միաժամանակ են գուրս գալիս՝ կիսելով նոյն դերը կամ թէ դերը կատարում է միայն Քեռի Թորոսը, իսկ Զէնով Յովանը յիշւում է անունով միայն առանց դերի: Զէնով Յովանը սովորաբար Դաւիթի եղբայրը կամ հօրեղբայրն է. բայց և նա Դաւիթի քեռին է դուրս գալիս և նոյն իսկ Քեռի Թորոսի որդի (3-րդ. 23, 25): Մի պատմուածքով (7-րդ. 49 հան.) Զէնով Յովանի փոխանակ Քեռի Թորոսի դերը կիսել է իշխանը, որ կարող է և հասարակ անուն լինել իրքն յատուկ առնուած:

Քեռի Թորոսի կամ Թեսաթորոսի անուան մէջ պահուած է Թէողորոս Ռշառունու յիշատակը: Այն հանգամանքը, որ Զէնով Յովանի անունը փոխանակում է Քեռի Թորոսին, ցոյց է տալիս, որ վերջինիս անունը 9-րդ դարու երկրորդ կէսից առաջ արդէն մտած է եղել վէպի մէջ, հաւանօրէն նոյն իսկ 7-րդ դարի վերջում, կամ 8-րդում. երբ պարսիկների տեղ սկսել են մտնել արաբները: Անշուշտ չենք կարող ասել, որ Քեռի Թորոսն կամ Թեսաթորոսն ևս իւր կողմից կարող չէ փոխանակած լինել մի աւելի հին անուան, Զարուանդին (կամ սրա որդուն), որ կայ Տարունի վէպի մէջ, որը Թէպէտ 9—12-րդ դարում միայն կարող է զրի առնուած լինել, բայց իւր մէջ պահում է վէպի հասգոյն ձեեր: Այդ տեղ գործողութիւնը դրւում է արաբացոց տիրապետութեան սկզբում, 7-րդ դարում, Թէողորոս Ռշտունու ժա-

մանակը. Տարունի հօր գլխաւոր քաղաքը Խլաթն է, որ աւելի նոր ժամանակի յիշողութեան է, բայց և յիշում է մշտունեաց Ոստանը, որ աւելի հին է:

Այսպէս մենք տեսնում ենք թէ ինչպէս վէպի մէջ հետզհետէ մտնում են նոր տարրեր, և նորը կամաց կամաց յետ է մզում հին, — Դաւիթը՝ Մուշեղին, Զէնով Յովանը՝ Թեոփ Թորոսին կամ Թեաթրոսին, Մուրայ մելիքը՝ Բաղդադու խալիֆային, Բաղդադու խալիֆան՝ հին Շապուհ արքային, Դումրիկ կամ լոկ խաչաղաշտ Հայոց թագուորը՝ Պապին, — բայց մինչև այժմ այս կամ այն պատմուածքի մէջ մնում են գեռ հին անունները: Միւս կողմից մենք տեսանք, որ հին վէպից Մուշեղի ճիւղը դառնում է նոխ Տարօնի վէպ, որի հետ է և Սասունը. ապա վէպի գործողութեան տեղը փոխադրում է Սասուն, և Տարօնը միայն երկրորդարար արւում է կալուած Սասոնյ իշխաններին: Վէպն աւելի հին է քան 9-րդ դարու երկրորդ կէսի Սասոնյ դէպքերը, որոնց ազգեցութեան տակ, ինչպէս վերևում գրեցինք, շատ զօրեղ կերպարանափոխութեան է ենթարկուել վէպը, այնպէս որ թւում է թէ այդ ժամանակ է կազմուել և միայն հին վէպից տարրեր վերցրել իւր մէջ:

Բայց եթէ լաւ քննենք, կը տեսնենք, որ նոր վէպն իւր ոգով ու միջադէպերով ևս հնի արձագանքներն է կրում իւր մէջ: Այսպէս Սանասարի և իւր եղբօր հաստատուելը Տաւրոսի վրայ նոյն է ինչ որ Մամիկ-Կոնակի պատմութիւնը. Սանասարի որդի Առիւծակ Մշերի որսի սարի պատմութիւնը նոյն է ինչ որ Մամիկ-Կոնակի սերունդ Վաչէի մասին պատմածը, որ անսանք վերենում իսկ Դաւթի վէպն իւր էութեամբ նմտն է Մուշեղի վէպին: Հին վէպի մէջ պարսիկներն են յարձակում գործում հայերին նուաճելու և հարկի տակ դնելու համար. իսկ Տարօնյ պատերազմի մէջ հայերին հնապանգեցնելու հետ պարսից նպատակն է և աւերել հայոց հաւատի տեղը ո. Կարապետ և կոտորել կրօնաւորներին: Այս միենյնն անում են Դաւթի վէպի մէջ պարսից յաջորդ Բաղդադու խալիֆան կամ Մարամելիքը, յարձակուելով ո. Կարապետի և աւելի Մարութայ Բանձը Աստւածածնի վանքը վրայ, որի կրօնաւորները կոտորում են Կուղբաղիկի ձեռքով, ինչպէս Ս. Կարապետի կրօնաւորները Մուշեղի վէպի մէջ Պարսից ձեռով, Նորագոյն Բաղը կամ Բաղիկը, Մըրուանեան հարստութեան հիմնադիր Բագ Ամիրայի անունը, փոխանակել է պարսիկ Միհրանին. դէպքը Մուրը Կարապետից դարձեալ Սասուն է փոխուել, իսկ ո. Կարապետի վրայ յարձակումը Բաղդադու խալիֆայի կողմից, որ դեռ յիշուում է վէպի մէջ, յետ է մզուել: Յաղ-

թողը նոր վէպի մէջ ևս հայերն են, և Մարայ մելքի կին ու քոյրը և ամբողջ վրանը, բանակով հանգերձ ընկնում է Դաւթի ձեռը, որ նոյնպիսի մեծահոգութեամբ է վարում գերիների հետ, ինչպէս հին Մուշեղը Շապուհի կանանց:

Հին Մուշեղի վէպի մէջ հայերը ենթարկում են պարսիկներին և արքայորդին՝ Պապ պատանդութիւնից դառնում է Մուշեղի հետ՝ նստելու իւր հօր տեղը: Նոր վէպի մէջ Սասունն ենթարկում է Մարայ մելքին և Յ. Վերգոն է Դաւթի հետ գերութիւնից դառնում՝ նստելու հօր բերդում: Կորիւ անողն այստեղ Մուշեղն է, այստեղ Դաւթի: Մուշեղի մահն առաջանում է նրա և թագաւորի թշնամական յարաբերութիւնից, միայն ոչ Պապի, այլ Վարազդատի օրով, իսկ Դաւթի մահը բոլորովին ուրիշ պատճառից է առաջանում: Ինչպէս կտեսնենք, այդ մահն ընդհանուր առասպելական գծով է պատմուած: Միայն՝ թէ Դաւթիթը և թէ Մուշեղը երես առ երես կոռւի մէջ չեն սպանում, երկուսն ևս անզին ժամանակ անակնիւլ յարձակումով են սպանուում:

Մուշեղի մահուան վրէժն առնում է «Եղբայրը» Մասուէլ, որ գերութիւնից ազատուելով՝ գալիս Մուշեղին սպանողին սաստիկ պատժում է, և ապա շարունակելով՝ կոռւել Պարսից գէմ՝ յաղթութիւններ է տանում և երկիրն ազանովում: Խսկ Դաւթի մահուան վրէժն առնում է որդին՝ Մհեր, որը նոյնպէս, ինչպէս տեսանք, գերութեան բանտարկութիւնից յետոյ՝ գալիս հօրն սպանողին սաստիկ պատիժ է տալիս, և կոռւելով՝ կող Բաղնի թուների հետ, որոնք շփոթւում են Բաղդադու խալիֆայի թուների հետ, ապահովում է Սասունը:

Այսպէս նոր վէպը իւր խոշոր էական գծերով շատ նման է հին վէպին և մասնաւորապէս Մուշեղի ճիշդին. այնպէս որ եթէ նոր վէպի մի քանի անունների տեղ դնենք հին անունները, որոնք, ինչպէս տեսանք, յետ են մզուած նոր վէպի մէջ, երկու վէպի նմանութիւնը նոյնութիւն կըդառնայ և կըմնան այնպիսի տարբերութիւններ, որոնք աննշան են: Այդ տարբերութիւնների մէջ պէտք է շեշտել այն, որ հին վէպի շատ ճիւղեր և միջազէպեր չկան նորի մէջ,—դրանք, հասկանալի է, մոռացութեան են տրուած,—և ապա այն, որ նոր վէպի մէջ ևս կան միջազէպեր, որ հնի մէջ չկան: Այս երկրորդ տեսակի միջազէպերը, սակայն, գրեթէ բոլորը դիւցազնական առասպեններ և գծեր են, որոնք նոր կարող էին մտնել վէպի մէջ և եթէ հին վէպի մէջ եղած էլ լինէին, մեր մատենագիրները չպիտի յիշէին: Ներքեսում մենք կըտեսնենք այդ դիւցազնական մասը: Այստեղ ամփոփենք մեր եղբակացութիւնը:

Մենք ունեցել ենք մի հին մեծ աղքային վէպ, որ արդէն պատրաստ է եղել 5-րդ դարում. պատրաստ՝ ոչ այն մտքով, թէ միակերպութիւն ստացած մի որոշ հաստատուն պատմուածք է եղել, այլ բազմաթիւ ու բազմազան զրոյցներ, մեծ մասամբ իրարուց անկախ, խմբուած են եղել Պարսից պատերազմի շուրջը և պատմուել մի քանի սերունդների վրայ, յաճախ միևնույն միջադէղը մի հերոսից միւսին տրուելով, կամ երկուսի, երեքի վրայ ևս պատմուելով. «Պարսից պատերազմը» նոյն վիճակի մէջ է եղել, ինչ որ այժմ «Սասնու ծոերն» ունի:

Այդ հին վէպի մի քանի հաստուածներ երկար ապրել են ժողովրդի մէջ՝ դարերի աղդեցութիւնից կերպարանափոխուելով: Մուշեղի ճիւղը յատկապէս ապրել է Տարօնում և ստացել տեղական բնաւորութիւն: Կազմուել է մի նոր վէպ՝ «Տարօնոյ պատերազմ»: Այնուհետեւ այս վէպն արաբացոց ժամանակի աղդեցութեամբ փոփոխութիւն է կրել. պարսից դէմ կոիւը դարձել է արաբացոց դէմ:

Վէպն այնուհետև 9-րդ դարու երկրորդ կէսին Սասնում տեղի ունեցած գէպքերի աղդեցութեան տակ բոլորովին կերպարանափոխի է եղել և ապա յաջորդ դարերի աղդեցութիւնն ևս կրելով, գլխաւորապէս մինչև 13-րդ դարը, կազմուել է մեր նոր վէպը: Տարօնոյ պատերազմը պարսից դէմ դարձել է Սասնու կոիւ Մորայմելքի դէմ: Հին անունները կամ մոռացութեան են արուած շատ հին միջադէպերի հետ, կամ թէ, ինչպէս Մուշեղ, Պաղ, և Շապուհ արքան, յետ են մզուած նորերի առաջ: Այս կերպարանափոխութիւնը կատարուել է մէկ այն պատճառով, որ Սասնուն անբաժան է եղել Տարօնից, մէկ էլ որ Սասնու 9—13-րդ դարու դէպքերը նման են եղել հին վէպի մէջ պատմուածքներին: Նոր վէպի մէջ գրեթէ չկայ մի միջադէպ, որ հին մէջ չկենցադական գծերը մի կողմ թողած՝ նորի դիրքազնական առասպելները միայն չենք գտնում հին վէպի մէջ:

Նոր վէպի մէջ ապրում են, ուրեմն, հին վէպի տարերքն ու ընդհանուր ոգին: Նոյն ձեռվ, մնաք կը տեսնենք, նոր վէպի մի քանի առասպելների մէջ դեռ կենդանի մնում են հին առասպելներից հատուածներ:

Թ.

### ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Աւանդութեան աղդեցութիւնը.—Մինչև այժմ ևս մեր ժողովր-

դի մեծագոյն մասն իւր հաւատքով, հայեացքներով ու բարքերով գեռ էապէս միջնադարեան վիճակի մէջ է: Իսկ միջին դարերում, երբ մեր վէտն իւր հաստատուն կերպարանքն է ստացել, մեր ռամբկը անունով միայն քրիստոնեայ է եղել. կեանքի ու զրոյցի մէջ շարունակել է պահել հին հեթանոսական հաւատալիքն և աշխարհայեցողութիւնը, շատ սակաւ քրիստոնէական գոյնով ներկուած, և այս ոչ իրքն անոտիապաշտութիւն, այլ իրքն կենդանի հաւատք: Աւանդութիւնն է եղել այդ ժամանակ, ինչպէս մեծ մասամբ ցայժմ, ռամկի դիմաւոր հոգմոր մնունդը. իսկ աւանդութիւնը, յայտնի է, մեծ դժուարութեամբ է փոփոխութեան ենթարկուած. և նրա միջոցով հին ժառանգութիւնը բաւական ճշտութեամբ անցնում է նոր սերնդին, որով և ռամկի ներքին, մասամբ և արտաքին կեանքը շատ երկար ժամանակ հաստատուն կերպով նոր հին ճանապարհով է ընթացել:

Գալով ժողովրդական վէպին, այստեղ ևս աւանդութեան նոյն ազդեցութիւնն ենք տեսնուած. ինչքան էլ ժողովուրդը իւր նոր պատմական գէպքերից առնելով վէպ ու զրոյցներ ստեղծէր, այդ նորի մէջ անհրաժեշտօրէն պիտի մտնէր հին աւանդութիւնից ստացածը, թէ հին վիպական հատուածներ, և թէ հին վիպական գծեր և առասպելներ: Նոր պատմական գէպքերի հետ, ուրեմն, կողքէ կողք պէտք է ապրէին հին առասպելները, կամ թէ սկզբնապէս բուն պատմական զրոյցը հետզհետէ պիտի ստանար հին առասպելի կերպարանը, իրեն քաշելով և միացնելով բուն առասպելական գծեր և նոյն իսկ ամբողջ պատմուածքներ, որ իսկական առասպելներ են.

Այսպէս էլ կազմուած է մեր վէպը, որ բուն պատմական հիմունք ունի, սակայն ամբողջապէս դիւցազնական վէպի կամ առասպելի կերպարանքով:

Դիւցազնական վէպ:—Թէ ինչ է հասկացւում այս անուան տակ, այդ շատ լաւ բացատրում է մեր դիւցազն բառը, որ նշանակում է դից ազգ, սերունդ: Դիւցազներն ուրեմն հասարակ մահկանացու, կամ վիպական բառով ասած՝ հողածին չեն. այլ ունեն որևէ աստուածային ծագում: Այսպէս են գրեթէ բոլոր ազգերի դիւցազները, ինչպէս յունաց դիւցազները, ինչպէս օրինակ գերմանների մեծ դիւցազն Սիրուրդը կամ Սիրֆրիդը, որ Օդինի աստուծու թոռան որդին է:

Դիւցազներ օժտուած են հսկայական մարմնով և գերբնական ուժով, որ ժառանգաբար ստանում են իրենց նախնուց կամ նըրանց՝ իրենց շնորհած գերմարդկային տուրքից: Նրանք կուում են ոչ թէ հասարակ մահկանացուների հետ, այլ իրենց նման հսկա-

ների, գերբնական արարտածների՝ վիշտապների, դեերի ու չար ո-զիների հետո Դիւցաղները, ինչպէս և իրենց նախնի աստուածները, մեծ մասամբ բնութեան անձնաւորումն են, բնութեան արքերական ուժի անձնաւորեալ պատկերացումը. ուստի և նրանց առասպեկները մեծ մասամբ սկզբնապէս Փիզիկական ծագում ունին, այսինքն նրանց արարեների մէջ ժողովուրդը բանաստեղծօրէն բացատրում է բնութեան երևոյթները: Այս է դիւցաղնական առասպեկլի էական յատկանից:

Ազնանց տիմ եւ մարդ:—Վէպն ինքը որոշում է թէ Սամանու ծուերը մարդ չեն, այլ «Ազնանց չնսից», այսինքն դիւցաղն են (7-րդ, 53—55): «Ազնանք բառն աղն=աղգ բառից, իրը աղնանք, աղգ ունեցողների, աղնիների տոհմ. սկզբնապէս անշուշտ այս բառն աղնուականի իմաստով է գործածուած եղել, որով որոշուել է մեր Սամանու ծուերի աղնուական, իշխանական ծագումը,—բայց այժմ ստացել է աղնաւուրի, հոկայի իմաստ: Ուրիշ տեղ մեր հերոսները կոչւում են Փերզի աղգ, կամ փառլիան, կամ անձնանուր (3-րդ, 35. 9-րդ, 407): Վերջին բառը, որ նշանակում է զարձեալ՝ աղնաւուր, կազմուած է անձն և նուր բառերից, իրը անձաւի երեղին, ինչպէս պատկերացում են բոլոր գերբնական էակները մեր հին և նոր ժողովրդական հաւատքով:

Վէպը շատ լաւ բնորոշում է իւր հերոսներին և մարդուն հետեւեալ միջադէպով, որ մի առանձին զրոյց է և տարածուած զանազան աղգերի մէջ:

Երբ Սամասարն ու Բաղդասարը իրենց տունը շինում են, «Բաղդասարն ամեն օր կերթար աւղուց: Մէկ օր գնաց, մեզի նման մէկ մարդ տեսաւ անտառի մէջ. էդ մարդին վերցրեց դրեց իր ջէրը, բերեց. իր որօն արաւ պրծաւ, եկաւ տունը: Երկու եղբայրով, մէկ էլ մայրն ու տէրտէրը հաց էին ուտում. բաժակը գինի լցնում, խմում քէփ էին անում: Իրար ասին. «Անուշ լինի», էն՝ էնոր, էն՝ էնոր: Էդ մարդը Բաղդասարի ջէրի մէջ իրար եկաւ, Բաղդասարն իմացաւ: «Հը», ընկաւ միտքը, ասաւ. «Իմ մէրս, էսօր մէկ բան եմ գտել զրել իմ ջէրս: Ասաւ. հէմն, տեսանեմ ինչ բան է, որդի»: Հանեց, տեսաւ մէկ բան ամեղ նման, ևդ էլ Աստուծու ստեղծածն ա, հաց տուէք թող ուտիւ:

Այս զրոյցին անորդապէս միանում է մի ուրիշ անկախ զրոյց որ նոյնպէս կայ ուրիշ աղգերի մէջ:

Ասաւ. «Մէրս, էս (մարդը) մնց գլուխ պիտի պահի: Ասաւ. «Որդի, գուր ջրից էք բահամ եկել. գուր Փերզի աղգ էք. ձեր բանը զուով է. ըգոնք խելքով կապրեն:—Ապա մարդու խելքը

փորձելու համար՝ հսկան ասում է նրան, որ ենի իւր ձիռ զլուխը, տայ ձիռ տոպրակը, որի մէջ անգամ քառասուն լիտր գարի էին լցնում: Մարդը տոպրակը բարձրացնել չէր կարող. բայց նա բանում է տոպրակի բերանը, ձին գարին տեսնում է, ոռութը մտցնում տոպրակի մէջ. մարդը տոպրակի պարանը ձգում է ձիռ ականջների բամակը, ձին որ գլուխը բարձրացնում է, տոպրակն էլ հետն է բարձրացնում, Բաղդասարը զարմանում է. «Իմ մէրս, քո խօսքն է. ես զօռով էի բարձրացնում, սա խելքով բարձրացրեց: Մրանք բանց մեզ շատ իմաստոն են»:

Ահա հսկայի և մարդու էական տարբերութիւնը: Հսկանյաղթանդամ է այն աստիճանի, որ մարդը նրա գրավանում տեղաւորում է. նա ուժով է և ամեն բան ուժով է անում և ուժով ապրում: Մարդը փոքր է, բայց հսկայից շատ իմաստուն է. և ինչ որ հսկան ուժով է անում, մարդը՝ խելքով: Մարդու ոյժը նրա խելքի մէջ է, եւ այս էական գիծը անցնում է գրեթէ ամրող վէպի մէջ, որի հերոսները ուժեղ ու յաղթ են, բայց, ինչպէս Դաւիթը, երեխայի պէս միամիտ ու անգէտ:

Վիթխարի յաղթանդամութիւնը գիւցաղնական վիպական ոգու մի պահանջ է: Մեծ հերոսները պէտք է լինին և լեռնադէղ հսկաներ: Նոյնպիսի հսկաներ են վէպի մէջ և կանայք, ինչպէս մերի մէջ Խանդութ խանումը: Գերբնական մեծութիւնը սակայն, որ մեր աչքին տգեղացնում է հերոսին, վէպի մէջ չի խանգարում գեղեցկութիւնը: Դաւիթն ու Խանդութը, ինչպէս և Սանասար և այն, աշխարհի գեղեցիկն են: Էականն է անդամների համեմատութիւնը կամ չափակցութիւնը, որ եթէ պահուած է, լեռնաշափ հսկան էլ գեղեցիկ է:

Վիթխարի հսկաներ են և Դաւիթի սոսի փահլանները, ուրոնք նոյն իսկ Դաւիթից աւելի բարձր ու հաստ են. Համզայ փահլանի ճկոյթի մատանին, օրինակ, դառնում է Դաւիթի «Ճեռաց բազուկ», և երբ Դաւիթ այդ մատանին մատին է ուզում զնել, գալիս համսում է անթի սակ (Յ-րդ, 47): Բայց, ինչպէս սովորական է ուրիշ աղքերի վէպին և, այդ սոսի փահլանները անձունի են կիրապարանքով, որովհետև մասերի համաչափութիւն չկայ: «Եղ Շըրըգան Խորասկանի վերին ունք էնքան էր կախուի, որ եկեր էր հասե վըր սրգին. ու չանգալով կապեր էր ու զարկե ետևանց վըր պառեկին: Ըն մէկէլ Լոռայ Հըմզայ փահլանի ներքեր մռութ գգետին կաւէր ու կերթէր» (1-ն 173 հտ.): Նոյնպէս Խանդութի գոնապան Համտոլի «մէկ պռուկ կախուեր էր սրտին» (2-րդ, 38):

Յաղթ մարմին յատուկ է և մեծ ոյժն ու զօրութիւնը, որին

օրինակներ շատ կան մեր վէպի մէջ։ Յիշենք սիայն Մհերի առարքը, որով նա, նման հին Անգեղ Տորքին, շալակում է ահապին ժայռն ու ձգում Զդիրի գետի մէջ ու ժայռի վրայ շինում է «Բրջայ բալակը»։ Մհերի ոյժը հին վէպի Տրդատի ուժից մեծ է, որի վրայ նոյնպէս պատմում են թէ հայկաբար բերել է քարեր Մասիսից։

Մեծ ուժի հետ տեսնում ենք, որ հսկաներն ունին և մարմնի պողպատեայ կարծրութին։ «Դաւթի եղունդն առաւ ջարին ու կրակ առնեց» (3-րդ, 26): Նրանց ձեռքերի ու ոտքերի, ինչպէս և ձիանց հետքերը, ցոյց են տալիս քարերի վրայ։ Խանդութի զլուխն, երբ նա իրենց բերդի գլխից ներքեւ է զլորում, գիպչում է քարին ու բարը փոս է ընկնում։ Փոսը սանդի տեղ են բանեցնում։ Վանայ քաղաքում ցոյց են տալիս Քուռիկի Զալալու ոտքի տեղը։ Դասիթն երկու ոսոխ փահնկանների զլուխը կտրում է, «ու զերկուսի բրջամ լէ կապեց յիրաք ու խորջինի աւա թալից վըր թարքին։ ու ըդունց լիզուն կախուած՝ զգետին դութնի ակօսի աւա կը վարէր»։

Այսպիսի մեծամարմին ուժեղ հսկաները ընականաբար և մեծ ծանրութիւն ունեն։ Վէպի մէջ առանձնապէս յիշուում է Մհերի ծանրութիւնը, որի առաջ հողը թուլանում է ու գետինը չի կարողանում վերցնել նրան։ ոտները թագուում են հողի մէջ ինչպէս Պարսից Ռոստամի, ոռւսաց Սվետառոգորի և ուրիշների համար է պատմուում։

Երբ մի անգամ մարդկային մարմին չափը խոշորացրած է, ընականօրէն և ամեն յատկութիւններ մեծացրած ու չափազանց ունեն հսկաները։ Վերցնենք մի քանի կարևոր և շատ տարածուած գծեր։ Դիւցազների ձայնը շատ բարձր է ու ամպի նման զոռացող և սար ու ձոր թնդացնող։ Այսպիսի ձայնով առանձնապէս օժառուած է մեր Զէնով Ցովանը։ Դաւիթը նոյնպէս պակաս ձայն չունի։ Երբ նա մահացու վերը է ստանում, բռուում է, և նրա ձայնը Մելքագետից համնում է մինչև Սասնոյ բերդը, որտեղից իսկոյն բռուում է Զէնով Ցովանը, և սրա ձայնը, քիչ չէ, Սասունից Արքատառական, Մհերն է հասնում։ Մահամերձ Դաւթի զոռոցը յիշեցնում է քրանսիական վէպի Ռոլանդի փողի ձայնը։ Դաւիթը նոյնպէս Պլոտրի փող ունի, բայց գործածութիւնը չկայ վէպի մէջ։ Մհերը որ հօր մահը լսում է, ուշաթափ ընկնում է մի քանի օր։ Նա արտասուում է, և նրա արտասուքից, ինչպէս ուրիշ պղկերի վէպերի մէջ կայ, գետ է կազմւում։

«Հալրաթ գութան քաշողը շատ հաց կուտէ», ասում է Դաւիթը, երբ զարմանում են իւր շատակերութեան վրայ։ Այսպէս

շատակեր և շատ խմող են գրեթէ բոլոր դիւցազները։ Դա ընդհանուր վիպական գիծ է։ Թառասուն գաւաթ, «քեասայ», գինի խմելուց յետոյ Դաւիթն ասում է. «Ուղար գդալով չեն ջրի», կամ «Ես ճնճղուկ չեմ, որ ինձի ջուր կուտաք. գինու կարաս ինձի շանց տուէք, իրթամ գինի խմեմ, գամ հաց ուտեմ» եւ գլուխը մտցնելով եօթ տարուան քացախ գինու կարասի մէջ, դատարկում է ու չի հարըում։ Հաց ուտելու և շատ խմելու օրինակ շատ կան մեր վէպի մէջ (1-ն, 168. 153. 3-րդ, 1828. 42. 73. 119, 7-րդ, 31 հտ.)։

Ընդհանուր տարածուած վիպական գծերից մէկն էլ այն է, որ դիւցազները ծնուելուց արդէն ունենում են մի նշան իրենց դիւցազնութեան. արագ աճում, զօրանում են և մանուկ հասակում արդէն ցոյց են տալիս իրենց գերմարդկային զօրութիւնը. Երբ ծնում է Մէկը, Դաւիթն ասում է. «Եթէ որ էդ տղէն ինձնից է, իւր վրէն նշան մի, զօրութիւն մի պիտի եղնի»։ Բերեցին զտղէն խոնդոխ (բարուր) էրեցին, ու բերեցին զգութնի զնշիլ բնդի տեղ փաթթեցին վըր տղին. տղէն էր, երբ որ լաց ու ճմլկտաց մէջ ճղօրին, ընդուր վրաւու փաթուկ զնշիլ կտոր կտոր եղաւ։ Դաւիթին աչքալոյս բերողներն ասում են. «Ճղէն լաւ տղայ է, բայց իւր մէկ ձեռքը սաղատ է, խփուկ է. մարդ չի կրնայ բանայ զիւր ձեռք»։ Եկաւ Դաւիթ նստաւ ու զմանուկի ձեռք մաժեց ու բացեց. տեսաւ, որ զուլանթ մի արիւն իւր ձեռի մէջն էր։ Ասաց. «Հայ, հայ, զաշխարհք արեր է կաթ մի արիւն, դրեր է իւր ձեռու մէջ։ Թէ որ բդի մնաց, ըդուր մօտէն զարմանալի բան գեղնի» (1-ն, 176)։ Զեռքի մէջ եղած «կերդ արիւնը» նշան է Մէկը ամբողջ կեանքին. «Էդա ինձնէ շատ արիւնք պիտի էնայ», գուշակում է Դաւիթը (3-րդ, 49), և Մէկըն անում է այդ մէծ արիւնքը իւր հօր մահուան վրէժն առնելիս և յետոյ։ Նոյն զրոյցը պատմում է և Լանկթամուրի համար՝ իրրև նշան Լանկթամուրի թափած մեծ արեան։

«Ի՞նչ խալիքի տղէք տարով կը մնծանան, Մէկը՝ օրով. ինչ ամսով, Մէկը՝ սահթով։ Այսպէս արագ մնծանում են և Սանսաւարն ու Բաղդասարը, և Մսրայ մնիքը, և Դոհրաբը, և ուրիշները, Նրանք շուտով հասակ են առնում և մանկական խաղերի ու չարութիւնների մէջ արդէն ցոյց են տալիս թէ իրենք հասարակ մահկանացու չեն։ Դաւիթի կամ Մէկը համար պատմում է, թէ ինքն իրեք տարեկան է, ընկերները ութ, տաս տարեկան։ «Ճանի վրայ կուրտան, վիր թէ եղու ձեռ, թեքեր թռան. վիր ոտքեր եղու, ոտքեր կոտրան։ Նրան փակում են տանը և քնած թողնում. «ճաշու վախտի զարթնեց, ելաւ

ձիու եթալ,—դուռ շեմքով սարդարով թռաւ եկաւաւ։ Նա բարդի ծառը կուայնում է, երեխաներին շարում վրան, ապաժառի ծայրը բաց թողնում, ու երեխայթը մի մի կողմ են ընկնում։

Այսպէս եթէ շարտնակելու լինենք, շատ այսպիսի գծեր կը գտնան ինք, ինչպէս օրինակ և Մհերի կամուրջ կապելլ, որոնք բատուկ են ոչ միայն մեր, այլ և ուրիշ ազգերի վէպերին։ Մենք տեսնարդ ծանրաբեռնութիւն համարեցինք ցոյց տալ թէ մեր վէպի որ զիծ կամ զրոյցը որ ազգի այս կամ այն վէպի մէջ ինչպէս է պատմում։ Դրանք ընդհանուր տարածուած վիպական եղանակներ են, որոնց միքանիսը յետոյ ևս կը տեսնանք։ Այդ գծերով պատկերտնում են զիւցազները, մեզնում մեր Ազնանց տոնմը, իրրե մի անցեալ ազնիւ սերունդ, որ չափազանց օժանած է ամեն մարմնական բարեմասնութիւններով, որև ըստ առակաւոր ձիու տոպրակի զրոյցին՝ աշխարհի կեանքի, ապրուսափի ծանրութիւնը բարձրացրել է մկանունքների ուժով, և ոչ խելքի հանճարով։ Մհերն իւր բռի, կոպիտ, բուն մարմնական ուժով է ապրում, մինչդեռ նրա մօտ, Տոսպան քարայրը մտնող հովիւր (Տոսպակը բարձրացնելու պատմութիւնը կար և Մհերի ու մի հովուի վրայ 1-ն, 182) «աշխարհը խելքով է ուստում»։ Մհերը, սակայն, հին շատ հին սերնդի ներկայացուցիչ է, նրա ոյժը թաղուած է գետին, նա փակուած է այրի մէջ։ Նրան փոխանակել է մարդկանց նոր սերունդը, որ մարմնով թոյլ է, բայց մտքի ուժով է գործում և ապրում։ Հական ուժեղ է, մարդը՝ հանճարեղ, —ահա այս երկսի տարբերութիւնը։ Եւ մեր վէպը հէնց սկզբում շեշտելով այս տարբերութիւնը, վերեւում դրած տոպրակի զրոյցին, շատ զեղեցիկ կերպով իրրե շարունակութիւն պատմում է թէ հսկայ եղբայրները իրենց նոր շինած տան անունը Մարդուն են զնել տալիս, որի համար հսկաների տունը չէ, այլ «Սասում» (9-րդ, 407 հ.թ.)։

Մովալին ծնունդը—Ռով են, ինչ ծագում ունեն մեր վիթխարիբը, եթէ մարդ չեն։—Արդարե մի քանի պատմուածքների մէջ Ազնանց նախնի երկու եղբայրները պարզաբար մարդկային ծագում ունին, բայց ըստ զիւցազնական վիպական ոգու, տեսանք, հերոսները պէտք է աստուածային ծագում ունենան։ «Դուք ջրից էք բահամ եկել (գոյացել), դուք ֆերզի ազգ էք, ձեր բանը զօռով է», —այս է ասում Սանասարի և Բաղդասարի մայրն իւր որդոց, շատ պարզ բնորոշում է մեր հսկաների գերբնական, յատկապէս փիղիկական ծագումը, որ մի քանի պատմուածքների մէջ մութը յիշատակութեամբ միայն կայ, մինչ ուրիշների մէջ պարզ կերպով պատմուած է։

Սենեքերիմը կամ կռապաշտ թագաւորը Սանասարի և իւր եղբօր հայրաթիւն է միայն. նրանց մայրը, Ծովեալ խանումը, յղանում է նրանց աղքիւրի ջրից, իսկապէս ծովից: Նա, դեռ կոյս, տիտուր իւր ակամայ ամուսնութեան համար, զիշերն երադում տեսնում է, ում, յայտնի չէ. միայն երազում ոքմին նրան ասում է. «Դնա ծովու բերան, դու քո մուրազ կառնես: Գնում է: Երբ ծովափին նստած՝ լաց է լինում, յանկարծ ծովը բացւում է, տեսնում է մի համեղ աղքիւր է ցայտում: Կռանում, մի բուռը լիքն է խմում, մի բուռն էլ կիսատու «Ձէն ելաւ, ասաց-ծով եկաւ յիւրիւր»: (Յ-րդ, 62. 8-րդ, 5. այլ Գ. Յովսեփեանի ձեռ. Մոկաց): Ուրիշ պատմուածքով (9-րդ, 405) մայրը զնում է ծովափ զրօսնելու. ինքը և իւր վարդապետը, որ կնոջ հագուստով իւր հետ էր, անցնում է մի կղզի. մանում է մի այրի մէջ, ուր մի փոքրիկ վանի կար, և վանքի մօտ մի աղքիւր էր բղխում և թափում ծովը: Այստեղ վարդապետը ժամ է ասում, աղջիկն աղօթում է ու լւացում, և մի բուռը լիքը խմում աղքիւրի ջրից, մի բուռն էլ կիսատու:

Աղջիկը յղանում է և հասկանում, որ Ծովիցն է: Ծնուռ են երկու եղբայր Սանասարն ու Բաղդասարը, որոնք զիտեն թէ իրենք հողածին չեն, այլ ծովային, ինչպէս ինքն իրեն անուանում է Սանասարը (Յ-րդ, 64): Նրանց մօր անունը՝ Ծովեալ, որ մենք Բաշ Աբարանի պատմողից լսեցինք, անշուշտ դարձեալ կապ ունի ծովի հետ: Զուրը նրանց տարրն է, և նրանք անմնասմոնում են ջրի տակ:

Աւելորդ է ասել, որ ուրիշ ազգերի մէջ ևս կան շատ դիւցազներ, որոնք նոյն ձևով ծագում են աստուածային ծովից կամ ջրից:

Զուրը:—Վիպական տարածուած գծերից մէկն է ջրից ոյժ ստանալը, և ընդհանրապէս խմելուց անսովոր արագութեամբ աճեն ու զօրանալը մի շատ սովորական եղանակ է թէ արևմբետեան և թէ մանաւանդ արևելեան զրոյցների և առասպեկների մէջ: Դիւցազները յաճախ իրենց սխրագործութեանց սկզբում, կամ մի մի հակայի դէմ կռուելիս՝ խմում են աղքիւրի ջուր, կամ ուրիշ հրաշագործ խմիչքներ, որից իրենց ոյժը կրկնապատկուում է: Հնդկական առասպեկների մէջ յաճախ ջրի տեղը բռնում է կովի կարը կամ մեղք: Իսկ Պարսից առասպելից յիշենք միայն, որ Ռոստոմը Զոհրաբից յաղթուելուց յետոյ՝ հրաշալի աղքիւրի ջուրը խմելով՝ ստանում է իւր առաջին մեծ ոյժը:

Մեր առասպեկների և վէպէ մէջ ևս առանձին տեղ է բըռնում ջուրը, յատկապէս աղքիւրը կամ կաթնաղքիւրը: Եթէ ջուրը

մեր վէպի մէջ մեծ նշանակութիւն ունի, ոչ միայն այն պատճառով, որ դա մի տարածուած վիպական եղանակ է, այլ և այն որ մեր գիւցադները ջրեղին կամ ծովային ծագում ունին: Նոյն իսկ այն պատճուածքների մէջ, ուր հերոսների ծովային ծնունդը չկայ, ջուրը կատարում է իւր գերը, և Սասնու ծռերի ուժի պատճառը ջուրն է դրում և յատկապէս Սասնու ջուրը կամ ջրի աղբիւրը:

Երկու եղբայրը հանդիպում են մի զօրեղ ջրի, որ լեռնից իջնելով՝ զարկում է մի մեծ գետի մէջ. «Կը կտրէր զըդ գետ ու կը շերտէր չուրի մէջանդը»: Եւ ասում են. «Որն որ զըտայ ջրի ակ գանէ, ու զիւր տուն լէ սուկէ վըր իդա ջրին, ընդրա աւլադ յէ որ եզնի, հմլա զօրեղ կեղնի» (Յ-րդ, 15). կամ «Որ նստի իդա հողի մէջ, ընդ որ ժառանգ եզնի, իդա ջուր խմայ, իդա ջրի պէս զօրընդեղ կեղնի. իմալ որ իդա թիչ՝ ջուր ինս շատ ջրին կը կտրայ, չն ժառանգ լէ հմալ կը կտրայ» (Ափնայ ձեռ. պատճ.):

Ուրիշ պատճուածքով (Յ-րդ, 64) Սանասարն ոյժ և լեռնանը-ման հակայութիւն է ստանում հէնց այն ծովի աղբիւրներից, ուրից յղացել էր մայրը: Երբ երկու եղբայրը իրենց հայրաթիւ կը սապաշտ թագաւորից հրաման ստանալով՝ զնում են աշխարհ տեսնելու, կանգնում են ծովի ափին, Սանասարն աւելի լաւ է համարում իրեն ձգել ծովը, քան կռապաշտն իրեն մատագ անի: «Սանասար ինք զցեց ծով: Աստծու հրամանով ծով ինչ չոր գետին՝ վրայ զնաց, ծով բացուեց: Գնաց մէկ բախչի միջին տեսաւ մէկ ձի էնտեղ թամբած, կիծական բուր վրէն կախ տուած: Սիրտ արաւ, որ ձին հեծնէր, ձին ասաց. «Հողածին, ինչ կանես, քո միտ բնչ է»: Ասաց. «Բեղ կը հեծնեմ»: Ասաց. «Բեղ կը տամ արեւ պական, կը խաշաշեմ»: Ասաց. «Ծովային եմ, ինձի կտամ քո փորի տակ»: Որ կը տար արեգական՝ խաշէր, տուաւ փորի տակ. որ կը տար՝ երթար յանդունդ, ինք տուաւ քամակ: Ասաց. «Ես քո ձին, զու իմ տէր: Դու հնեղացած կը լինիս, երթանք էնտեղ մի ջուր խմիր, հանգստացիր»: Գնաց տեսաւ մի կութ էնտեղ էր, երկու զիտր բամբակ զրեց մէջ, զրեց զլուխ, չկանգնեց. մէկ մէջկապ էնտեղ էր, եօթ փաթ եկաւ բոլոր մէջաց, չկայինց՝ մէկ ջուխտ կոնդրայ, մէկ-մէկ զիտր բամբակ զրեց, հագաւ, հալա մեծ էր... Ջուր խմեց, քնեց. քնեց մի քիչ, Աստծու շնորհը տաեց. վեր ելաւ երկու զիտր բամբակ հանեց կունիփրէքաց, հագաւ, — էնդուր ոտով. մէջակապ՝ մէջքով, կութ՝ գլխով: Ելաւ ձին հեծաւ, բախչով կերթար, մէկ էլ տեսաւ ծովու երես: Բաղդասար տեսաւ, որ սուր եկեր ասարի վրայ, ասաց. «Երթայի կռապաշտ թագաւորն ինձ մատղէր, աղեկ էր, քան էս ջանաւարն ինձ ուտէր»:

Մի պատմուածքով (Մոկաց Բ. ձեռ) Սանասարն իւր մօր պէս երազ է տեսնում ծովափ գնալու. «Իսա ծովու բերան, ասաց, ծով կը բացուի յետ, կը մտնես յանդի էղածի մ' (եկեղեցի մ') կայ յանտեղ, մէկ բուր կայ այնտեղ, մէկ աւետարան խաչ վերան. զըն բերես, ալ բան չառնես»: (Ց-րդ, եր. 6), Սանասարը ծովի տակին տեսնում է «Թօշկ ու սարէ մ' կայ յանտեղ, հաւուզ մ' կիւ մանջ քեօշկ ու սարին կը թալի. ձի մ' անտեղ կապուկ, ձիու չորս ոտան մէջ թուր կէծակին, կապէն աթըպէն, կիւտիկնը գլախին, քէմերը մէջը մտաւ մէջ լողկցաւ, էլաւ ճակեր կապեց յըմէն: Քիւլիկի Զալալին հեծաւ, թուաւ դիւս ծովուց: Սանասար ճիժ էր, որ մտաւ ծով. ելաւ լցուաւ դարձաւ նեղէնեա: (Ց-րդ, եր. 406), երկու եղբայրը իրենց մօր հետ ճանապարհ են ընկնում «իրանց խէրական երկիրը» գալու, հասնում են այն ծովի կղզին, ուր մայրը գնացել ջուր էր խմել, մայրն ասում է. «Որդի, գուք էլ գնացէք էն անմահական աղբիւրից խմէք»: Տղայքը գնում են խմում. «Լցուան, Աստըծու հրամանքիւ յէլան երա տղամարդ: Վանքից յէլան. վանքի քամակ տեսան մէկ ձիան քուռակ կայ. ընտեղ քուռակը բռնին երկու ախպրով. առան բերին, էն յաղրրի ջրից էն քուռակն էլ խմաւ, լցուաւ, մեծացաւ էդ աղեքը վանքի մէջ մէկ գուռ կար բացին. պահարան էր, մէկ թուր էլ կախուկ էր պահից, մէկ փաս էլ էր գրուած, էն էլ վերցրին. մէկ ջուխտ սուլ էլ կար, էն էլ վերցրին»:

Նոյն ձևով կաթնաղբիւրի ջրի մէջ լողանալը պատմւում է և Դաւթի համար: Մսրայ մելքի դէմ գնալիս՝ նա իւր հօր աղբիւրից ոյժ է առնում, լցուում հաստանում է և յաղթանդամ հսկայ դառնում, և նոր իւր հօր հազուատն ու զէնքերը լաւ գալիս են վրան (2-րդ, 8-րդ, 34. 7-րդ, 22 հտ. 3-րդ, 109.): Այս կաթնաղբիւրը կամ կաթնով աղբիւրը մի պատմուածքով (Ց-րդ, 382, 430) Դաւթի հօր «Սէյրանստեղում» է և Դաւթի հօր մահից յետոյ չորանում է և տեղը փոս մտում. Դաւթի առաջ աղբիւրը ծննդում դուրս է տալիս: «Էս ջուրը որ կայ, անմահական ջուր ա. ջուր քու հէրը չխմէք էս ջրից, կոիւ չէր կարայ անի»: Այս ջուրը ոչ միայն զօրացնում է, այլ և ձիու կոտրած կողաշարը լաւացնում:

Ջրի կենդանարար զօրութիւնը շատ լաւ երևում է և Դաւթի Օղան-Տողան թագաւորի դէմ վարած կուռի մէջ: Թշնամիկն երբ ճար չեն գտնում, «Թուղթ են բաց անում» և իմանում որ «Դաւթի աղզ ջրից ա բահած եկելք: Ջրի ճանապարհը կարում են, չեն թողնում երթայ գէպի ջուրը. չչունքի չուր իրիկուն կըռաւում էր, էթըմ ընկնում էր ջուրը. եարէք միաւորւում էր, առաւու էլի գալըմ էր կոիւր: Եւ Դաւթիթը կոուից յետոյ միշտ լողա-

նում է. (7-րդ. 36, 41; 8-րդ. 48, 9-րդ. 445): Այս լողանակն անշուշտ արինից մաքրուելու մի առասպելական պատմուածք է, որի մի սիրուն օրինակ գտնում ենք 9-րդ, եր. 390:

Զրի այս հրաշագործ զօրութեան մէջ կայ երկու կողմ. մէկ որ, ինչպէս վէպն ինքը բացատրում է, որովհետեւ մեր զիւցաղները ջրից են դոյցել, ջուրը նրանց տարրն է, ուստի ոյժ ու կենդանութիւն է տալիս նրանց. մէկ էլ ընդհանրապէս հեթանոսական հաւատալիք է դա, որ ցարդ ևս մեր ժողովրդի մէջ գեռ տեղ տեղ մնում է: Այդ հին հաւատքով ջուրը, յատկապէս աղբիւրի ջուրը, բոյսերի հետ միասին, տալիս է ողջութիւն և առողջութիւն, երկար կեանք և մինչև իսկ անմահութիւն: Այդ պատճառով և ջրի մակղիրն է անմահական, անմահութեան (M. Abeghian, der Arm. Volksglaube, եր. 57 հան.):

Քուռկիլ Զալալին եւ նրեղեն ծխանք: Դիւցաղնական վէպի մէջ յաճախ հերոսների սարքը, այսինքն ձին, զէնքերն ու ըգդեսանները, նոյնպիսի աստուծային ծագում ունին, ինչ որ իւրինք զիւցաղները: Դրանք ստացում են սովորաբար դիւցաղների նախնի աստուծուց և ժառանգաբար անցնում որդէցորդի: Մենք վերելում արգէն տեսանք, որ մեր զիւցաղների սարքը Սահասարը ձեռք է ըստում նոյն հայրական ծովի տակ, որ միևնույն, թէ նոյն ծագում ունի սարքը, ինչ որ ինքը Սահասարը եւ այդ սարքը որդէցորդի մնում է Սասնու Զոջանց տանը: Սարքի մէջ ասածին տեղը բանում է ձին:

Մեր վէպի մէջ մի քանի դիւցաղնական ձիեր են յիշւում. առաջինն է Քուռկիլ կամ Քուռկիլ Զալալին, որ ասւում է նաև Քուռկի Գօղլաթիկ կամ Գօղլաթին, Քուռկիլ Զալին, այլ և Կապուտ Քուռակի: Սա է իսկական ժառանգական ձին, որ Սահասարից անցնում է իւրեն յաջորդ գլխաւոր հերօսներին և վերջն անմահ Մէկրի հետ փակուած մնում է վանայ քարայրում: Քուռկիլ Զալալին նրեղեն է, ինչպէս կոչւում են մեղանում ջրում ապրող ողիները, յուերժահարսներ և այլն, որոնք մարդու կամ կենդանու կերպարանքով են, բայց մարդկային կամ կենդանական ծագում չունին, այլ բնութեան ֆիզիկական երևոյթների առասպելական անձնաւորումն են մարդակերպ կամ կենդանակերպ:

Քուռկի Զալալինի ծագումը մեր վէպի մէջ, նայելով պատմուածքներին, երեք ձևով է պատմւում: Երեքն ևս ընդհանրապէս յատուկ են մեր զրոյցներին և հին ու նոր ժողովրդական հաւատալիքներին (տես մեր յօդուածը՝ «Ազգային վէպ», «Մուրճ» 1890 Խ 1. եր. 44 հան. այլ և մեր օր. Արմ. Volksgl. եր. 100 հան.): Վերելում դրած հատուածների մէջ արդէն տեսանք, որ

Սանասարն այդ ձին ձեռք է բերում ծովի տակին, աղբիւրի ջուրը խմելիս. ձին թամբած պատրաստ կանգնած է, կարծես սպասում է իւր տիրոջը. Ձին ուրեմն ծովալին է, Երկու եղբայրը Արլաղն ու Իշխանն ևս, որոնք մասամբ Սանասարի և Բաղդասարի տեղն են անցած, ունեն բոզ ու կարմիր ձիանք, որոնք հիրեղէն են և ծովից դուս եկած ձիանք են» (7-րդ. 50, 59 հտն.).

Երկրորդ եղանակը գտնում ենք Մոկաց Բ. ձեռ. պատմուածքի մէջ: Սանասարին իւր մայրը չորս տարեկան հասակում ուղարկում է պատի մօտ ուսում առնելու. նա մօր խորհրդով ընծայ է ստանում քեռու վեցտանի ձին: Պղնձէ քաղաք գնալուց առաջ նա այս ձին պթորկեր էր, կեացեր էր ծովու բերան կարածէր. Գնաց դեան իւր ձին: Տեսաւ կեօ բուռակ ըմ մատ իւր ձին ի, կը խաղայ ամպեր: Ձի մ' ծովուց ելիր դիւրս. կեացիր վեար էնու ձիան. էդ քուռակ էնու մօտ էզիր էր: Այստեղ Քուռակի Զալալի ծագումը մութն է պատմուած. բայց ում որ ծանօթ է ժողովրդական հաւատալիքը, որ Եզնիկ Կողբացու ժամանակից ցայժմ կենդանի մնում է, պարզ կը լինի. ծովերի մէջ ապրող հրեղէն ձիանց և ափերին ապրող մատակների զուգաւորութիւնից ծնուռ են հրեղէն ձիեր:

Ուրիշ պատմուածքներով Դաւիթն է ձեռք բերում Քուռակի Զալալին, մտնելով գեների այրը և սպանելով նրանց (1-ն, 155. 3-րդ.): Դեկրը միշտ հրեղէն ձիանք ունին: Սակայն պատմուածքներից երեւում է, որ այս միջադէպը խանգարուած է, և Դաւիթն խսկապէս իւր հօր ձին է յետ խլում գեներից, որոնք՝ իրքն աւազակներ՝ Դաւիթի հօր մահից յետոյ կողոպուտ են արել և լցրել իրենց քարայրը: Հստ 7-րդ պատմուածքի, եր. 65 հտ. Դաւիթը մտնում է գեների այրը, գտնում ձին, որ ասում է. «Սատունայ ծուռ, դու եկար ինձի գտամբ. Աստուած ինձի քեզիկ էր զսմաթ արել: Մէկ օրուայ միջի ուղենամ աշխարհ կը քանդեմ, ուղենամ կը շինեմ (ըստուր տէրը մեռեր էր, էդ ձին ծովից էր հանն): Ես Քուռակէ Զալալին եմ, իմ տիրոջ թուրն էլ հետս է. պատից կախուկ է, Կեծկան բուրք»:

Սամսու տանը կան և ուրիշ հրեղէն ձիանք, թուով քառասուն կամ երեքհարիւր (3-րդ, 105): Դրանցից մէկն է և Բաղդասարի ու Զէնով Յովանի Յուրադ ձին, կամ Մրազ ձին (7-րդ, 35 հտ. 9-րդ 434, 445 հտ.), ինչպէս և Զէնով Յովանի սպիտակ (բոզ), կարմիր և ու ձիերը, որ մի ակնթարթի մէջ մտքի պէս արագ թուզում են (2-րդ. 6-րդ, 68): Հրեղէն ձի է և Պարոն Աստղկի ձին, այլ և Կուռ Բաղնի վեցուանի ձին, որ թուզում անցնում է (6-րդ, 21, 7-րդ, 14 հտն. 9-րդ, 42):

Հրեղէն ձիանըն ունին նոյն յատկութիւնները ինչ որ իրենց տէրը, նրանք հսկայական են, արագընթաց և ուժեղ: Սանասարն երբ քեռու տուն է գնում, «ձին դուսով չանցաւ, մէկ գուրզ տուեց, մէկ բուրջ փլցրեց, ձին ներս քաշեց» (3-րդ, 65): Նրանց վեցոտանի, կամ թեաւոր լինելը, ինչպէս Պարոն Աստղիկի ձին է ըստ 2-րդ պատմուածքի, նշան է նրանց արագութեան: Թուռկիկ Զալալին թաշունի պէս թռչում է օդի մէջ «մէջ երկինք մէջ զետինք», սատղերի հետ խաղումը: կամ «կը խաղայ ամպեր»: Նա ուսամի է, բամու հետ գնում է: երբ բարկանում է, ասում է «կարող եմ քեզ տալ արեգակին, որ այրուեմ»: Օդի մէջ ոլանաւով հանդերձ՝ նա և ազատ շարժւում է ջրի մէջ, որ նրա արրն է:

Հրեղէններն անսակի ուժեղ են. բայց նրանց տէրը միշտ տևելի ես ուժեղ է: Զէնով Յովանը, որ ձեռքը տալիս է սպիտակ ու կտրմիր ձիերի մէջքին, ձիերը փորերը տալիս են զետին, բացի Աև ձիուց: Նոյնն անում է Դաւիթը, և քառասուն ձիու միջից միայն կապուա թուռակը փորը գետին չի տալիս, այլ ընդհակառակն աքացի է զարնում, և նրա աքացուց պատը փուլ է զալիս, ըերզի պարիսովը կործանւում, և աքացուց կրակ է զուրս զալիսի՞այց հերոսը զլիին մի բռունքը է տալիս, որով «ձիու քեփը զլիսիցը թափում է»: Ինչպէս Դաւիթը Խանգութի տանը քառասուն փահեանին քշում է զուրս մենակ հացն ուտում, նոյն պէս և նրա ձին դոմի մէջ քառասուն փահեանի ձիերին զուրս է քշում և նրանց խոտ գարին մենակ ուտում (7-րդ, 20, 3-րդ, 57, 60):

Հրեղէններն, ինչպէս շատ վէպերի մէջ, անասուն չեն. հարկաւոր տեղը Աստուծու հրամանըով նրանց լեզու է զալիս, իրենց մասին գանգատում են, և իրեն հաւատարիմ ընկեր խորհուրդ են տալիս դիւցազնին, քաջալիրում նրան և այն: Նրանք նախազգում են վաճառքը և իրենց արարքով նախազգուշացնում տիրոջը: «Մեր ազգին տուովի ա. մեր ձիանքն իմաստուն են, որ մեր ազգը նեղութեան մէջ ընի, ձիանքն իրանք մուրքի տակը քանզին» (7-րդ, 24, 51, 58, 61): Եւ վերջապէս կռուի ժամանակ ինչպէս փոթորիկ անցնում են թշնամու բանակով, տիրոջ հաւատար և նրանից էլ աւելի կռաօրում թշնամիներին աքացով, պոչով, ատամներով և շնչով ու քամիով (3-րդ, 111, 7-րդ, 24, 52, 58, 395, 431):

Վիպական շատ տարածուած գծերից մէկն էլ այն է, որ հերսոնի մահն իմացուում է արանց հեծեալի տուն վերադարձող ձիուց: Դաւիթն որ սպանուում է, «ձին էնտեղ ծուաւ, ծրակապ կտրեց, ընկաւ զուրս ինչքան հովիւ ուստ եկաւ, նախորդ ուստ

եկաւ, տաւար, ձի, —բիրաղի կոտորեց, գնուց կանգնաւ առջև Խանդութ Խաթնի դռան։ Խանդութ Խաթունն էլ ելաւ, իրիշկեց տեսաւ՝ ձին եկեր է, տէրը հետը չկայ, էն սհաթ խարար էրաւ, որ Դաւիթ կորուսն ի, չկայ» (3-րդ, 135)։ Ղաղանքարի ձեռագիր պատմուածքով ձին վիրաւոր Դաւթին բերանն առած բերում է Սասուն։

Թուրկի Զալալինի թամբը սատափի է, ասպանդակները ոսկի, սանձը՝ պողվատի. պայտերը՝ տկներու Մմբակը, որ վիրաւոր տում է, մէջը եազութ, զմբուխտ են հալում լցնում (7-րդ. 139). Նրան պայտել է հրեշտակը։

Կայծ կի բուր եւ ուրիշ գեներ ու զգեսներ։ — Զոջանց տան ամենից նշանաւոր զէնքն է թուր կէծակին, որի անունն իսկ բացատրում է իւր յատկութիւնները, նա կայծակ է, կամ կայծակից շինած։ «Քո թուրն որ կայ, կայծակից ա», «կէծակ էր, ապա թժ. ըս (9-րդ. 43. 3-րդ. 116)։ Դա ամենահատու սուսերս է աշխարհիս երեսին. կտրում է ամենայն բան։ Մի հարուածով Դաւիթը շերտ շերտ կտրում է երկաթէ կամ պողվատէ սիւնը կամ ծառը (3-րդ. 32. 39. 108. 7-րդ. 23. 8-րդ. 34)։ Մի խփելով կտրում է քառասուն դարաղած գոմշի կաշին, քառասուն ջրաղացքարը և տակին նստող Մորամելքին այնպէս կիսում, որ նա չի գգում, ու գետինը շերտում հասնում, է Սև ջրին (3-րդ. 116)։ «Հրեշտակ թե տուից յառջն, թէ չէ Սև ջուր տելիներ, աշխարհը կառնէր» (7-րդ. 28) Սև ջուր ասելով հասկացւում է Ստորերկրի բայ ջուրը։ Հսկայի զէնքի գետին մտնելը սովորական վիպական գիծ է. բայց դա և կայծակի յատկութիւններից մէկն է ըստ ժողովրդական հաւատալիքի։ Առհասարակ կայծակի թուրն իրրկ իսկական կայծակ է պատկերանում մեր վէպի մէջ. այդ թրի բերանից կրակ է թափում, և մարդիկ վառում են նրա կըրակի առջև (7-րդ. 24, 27, 66.) ուսաի կոչւում է և կէծիտան բուր։ Այդ թրով կոռւելիս պարզ օրը կէսօրին առանց ամպի կայծակ է տալիս և որոտում է։

Ուիշ զէնքերից յիշում է գուրզը, որ է լախտը, նախնական վիպական զէնքը, որ սիրելի է և մեր վէպին. մի քանի պատմուածքների մէջ Դաւիթը, թէ և կայծակի թուր ունի, բայց աւելի բանեցնում է գուրզ փերրզին, կամ գուրզ հազարին կամ ծանրիկ գուրզ, (3-րդ. 107. 7-րդ. 20 հտն. 9-րդ. 428 հտն.)։ Դա մի շջումախա է, գլուխը ծանր երկաթ հազցրած։ Ապա յիշում է Ըուրմիկ Զոջանին կամ Ֆերզին, նետ-աղեղ, որ աւելի որսորդութեան ժամանակ են բանեցնում. պարան, որով բռնում են թշնամուն. բայց այս զէնքն աւելի Դաւիթի թշնամիների ձեռին է երևում, որոնք բռնում

ևն Դաւթին: Հարկաւոր գէտքում մեր դիւցազներն ևս չեն խորշում նախնական բիրտ զէնքը բանեցնել: այն է պատահած ծառը, սովորաբար բարտի, արժատահան են անում և ուսերին դրած ընկնում թշնամիների կամ գաղանների ետելից:

## ՀԵՅ ԺԱՌԱՎԱԴԱԿԱՆ ԻՐԱԿԱՋԻՒԹՔ

(Տեսութիւն նայ սովորութական իրաւունքից)

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

IV<sup>o</sup>)

Թէ հայ Դատաստանագրքի և թէ մովսիսական օրէնքների ժառանգական իրաւունքի համեմատական վերլուծումից կարելի է եղբակացնել, որ ժառանգական յաջորդութեան առաջի երեք կարգերը հիմնած են այն սկզբունքի վրայ, որ ժառանգումն անցնում է ուղղակի գծով. այսինքն ժառանգութեան իրաւունքը պատկանում է նախ մեռնողի զաւակներին, ապա մեռնողի հօր զաւակներին և վերջապէս մեռնողի հօր հօրը (պապի, մեծ հօր) զաւակներին: Այս տեսակ յաջորդութիւնը յայտնի էր հոռվմէական իրաւունքի մէջ աստիճանական ժառանգումն successio graduum անունով:

Այսուհետեւ թէ Մխ. Գօշի Դատաստանագրքի և թէ Մովսիսական իրաւունքի օրէնքներում պարզօրէն շի որոշւած և ինքնըստիւնքեան չի պարզաբանած ազնատների ու կօգնատների փոխադարձ յարաբերութիւնները ժառանգական հարցերի վերաբերմամբ: Սակայն յաջորդութեան երկրորդ և երրորդ կարգերի հիմնավագը վրայ կարելի է եղբակացնել, որ մեռնողի քոյրերի և հօրաքոյրերի հեռացումով ժառանգական իրաւունքից, զրկում են ժառանգական իրաւունքից և սրանց զաւակները և այլն: Ընդհակառակն յաջորդութեան առաջին կարգի ժառանգների իրաւունքի հիմնավագը վրայ կարելի է եղբակացնել, որ դուստրներին ճանաչելով ժառանգներ, օրէնքը ոչ ipso ճանաչում էր նաև զստերց զաւակներին, թոռներին իրքն ժառանգներ: Ահա թէ ինչպիսի մեծ նմանութիւն կայ Մխիթար Գօշի Դատաստանագրքի և մովսիսական օրէնքների իրաւաբանական հայեցքներում:

\* ) Տես Ազգ. Հանդէս XV գիրք: